Լ Ր Ա Ց ՈՒ Մ

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ 03.07.2019թ. ԹԻՎ 1/446Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԱԶԴԱԳՐԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

թողարկողի անվանումը

ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, հեռ. (+374 10) 510 910, ֆաքս (+374 10) 538 904, էլ. փոստ bank@aeb.am

արժեթղթերի դասը (տեսակը)՝	սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)
արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
արժեթղթերի քանակը՝	30,800 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	10,400 ՀՀ դրամ
արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	320,320,000 ՀՀ դրամ

ՏԵՂԱԲԱՇԽՈՂ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ
17 10 տարին 19

ՀՀ ԿԲ նախագահի 16/10/2019թ
թիվ N1/773Ա որոշմամբ:

Պայմանավորված այն հանգամանքով, որ վերջին հաշվետու տարվա (որի համար ներկայացվել են անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություններ) վերջին օրվանից սկսած անցել է 9 ամիս, կից ներկայացվում է ՀՀ ԿԲ Նախագահի 03.07.2019թ. թիվ 1/446Ա որոշմամբ գրանցված Ազդագրի լրացումը.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջ
	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	**3**
Բաժին 1.	**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**	**5**
1	Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ	5
2	Բանկին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	9
3	Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	10
4	Բանկի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ	11
5	Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	11
6	Առաջարկվող կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության համար նախատեսված արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները	13
7	Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	13
8	Այլ էական տեղեկություններ ըստ բանկի հայեցողության, որոնք նշված չեն նախորդ կետերում	14
9	Ամփոփ ֆինանսական տվյալներ	14
	Հավելված	16

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սարիբեկ Սուքիասյան	*Խորհրդի նախագահ*		14.10.19թ.
Ռուբեն Հայրապետյան	*Խորհրդի նախագահի տեղակալ*		14.10.19թ.
Լուիզա Պետրոսյան	*Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար*		14.10.19թ.
Արամ Մելիքյան	*Խորհրդի անդամ*		14.10.19թ.
Վահագն Խաչատուրյան	*Խորհրդի անդամ*		14.10.19թ.
Պեր Ֆիշեր	*Խորհրդի անդամ*		
Արամ Խաչատրյան	*Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն*		14.10.19թ.
Արտակ Առաքելյան	*Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ*		14.10.19թ.
Օնիկ Չիչյան	*Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ*		14.10.19թ.

Ռուբեն Բադալյան	*Վարչության նախագահի տեղակալ, Գործառնական գծով տնօրենի տեղակալ*		14.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Աստղիկ Մանրիկյան	*Վարչության նախագահի տեղակալ, Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ*		14.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արփինե Փիլոսյան	*Վարչության նախագահի տեղակալ, Տեխնոլոգիաների և անվտանգության գծով տնօրենի տեղակալ*		14.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միքայել Պողոսյան	*Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ*		14.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հայկ Ավետիսյան	*Վարչության անդամ, Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ*		14.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վրեժ Ջհանգիրյան	*Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ*		14.10.19թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Արամ Խաչատրյան	*Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն և առաջարկվող բաժնետոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության համար պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար միայն այն դեպքում, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ www.aeb.am:

Սույն Ազդագրում ներկայացված անձանց անձնական տվյալները ներկայացված են այդ անձանց համաձայնությամբ:

1. Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ

1.1. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

1.2. Բանկի կազմակերպական-իրավական ձևը՝ բաց բաժնետրիրական ընկերություն:

1.3. Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, գրանցման համարը՝ 1:

1.4. Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1,

1.5. Կապի միջոցները՝

հեռ. (+374 10) 510 910
ֆաքս (+374 10) 538 904
էլ. փոստ bank@aeb.am
ինտերնետային կայք www.aeb.am
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

1.6. Բանկին առնչվող և բաժնետոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապնվել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ Հ. Ավետիսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 510 976:

1.7. Թողարկողի համառոտ պատմությունը.

Բանկը (նախկին ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկ) ՀՀ պետական բանկերից առաջինն է վերակազմավորվել բաժնետիրական բանկի:

1991թ. փետրվարի 14-ին ՀՀ Մինիստրների խորհրդի №115 որոշմամբ ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկի հիման վրա ստեղծվել է

Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (Հայպետկոմբանկ):

1992թ. նոյեմբերի 16-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու №1 լիցենզիա:

1993թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ ԿԲ վարչության նսիտի որոշմամբ (արձանագրություն №40) Հայպետկոմբանկը վերագրանցվել է Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկի (Հայէկոնոմբանկ) (գրանցում՝ Թիվ 1/35)՝ ստանալով Թիվ 1/35 բանկային գործառնությունների իրականացման Արտոնագիր:

2002թ. Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «B» հարթակում:

2004թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի ու ՎԶԵԲ-ի միջև կնքվեց պայմանագիր, որով սկսվեց Բանկի կանոնադրական կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցության գործընթացը, որի արդյունքում ՎԶԵԲ-ի մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կազմել է 25%+1 բաժնետոմս:

2007թ. Փետրվարին Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն շնորհեց ֆինանսական կայունության E+ և երկարաժամկետ ՀՀ դրամով ու արտարժույթով ավանդների B1 վարկանիշներ, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

2013թ. Բանկը ստացել է ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր:

2014 թվականի դեկտեմբերի 3-ին ՎԶԵԲ-ը, Սուքիասյան եղբայրները եւ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն կնքել են բաժնտոմսերի գնման պայմանագիր, որով ՎԶԵԲ-ը համաձայնել է վաճառել իր 233,335 սովորական բաժնետոմսերը հինգ հավասար մասնաբաժիններով (46,667 ամեն տրանշ) հինգ տարվա ընթացքում՝ սկսած 2014 թվականի դեկտեմբերից մինչև 2019-ի մարտի 2-ը:

2015 թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով:

2016թ. ՀՀ ԿԲ որոշման համաձայն «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն միացավ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին, որի արդյունքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կապիտալն ավելացավ 5,294,232 հազ. դրամով, իսկ մասնաճյուղային ցանցը՝ 6 մասնաճյուղով:

2018թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի էմիսիոն եկամուտներից՝ 33,438,300 դրամ, չբաշխված շահույթից՝ 2,524,160,700 դրամ և Գլխավոր պահուստից՝ 3,000,000,000 դրամ ուղղվեց կանոնադրական կապիտալի ավելացմանը, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 22,266,343,200 դրամ և դրա հաշվին 3,000 դրամի չափով ավելացավ մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը՝ 7,400 դրամից դառնալով 10,400 դրամ:

2019թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի Կանոնադրական կապիտալը համալրվել է 3,369,000.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 25,635,343,200 դրամ:

Բանկին տրված լիցենզիաները և արտոնագրերն անժամկետ են:

1.8. Բանկի ռազմավարությունը

Բանկի ռազմավարական թիրախը՝ որպես ունիվերսալ կառույց շարունակական զարգացման ապահովումն է՝ մատուցելով հաճախորդներին միջազգային չափանիշներին համապատասխան բանկային ծառայություններ, ապահովելով Բանկի հաճախորդների և բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը:

Նախատեսելով զարգացման բոլոր ոլորտների թե՛ քանակական, թե՛ որակական աճ, շարունակվելու է մեծ ուշադրություն դարձվել ռիսկերի կառավարման համակարգի, ներքին հսկողության համակարգի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, կորպորատիվ կառավարման արժեքների զարգացմանը, բանկային ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների կատարելագործմանը, միջազգային գործառնությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը:

Բանկի ռազմավարության հիմնական խնդիրները բխում են բանկի ֆինանսական քաղաքականության գլխավոր խնդիրներից՝ պահպանել և ավելացնել բանկի ընդհանուր կապիտալը, ապահովել բանկի կայուն իրացվելիությունը, արդյունավետ կառավարելով բանկի ֆինանսական միջոցները, ապահովել եկամուտների այնպիսի մակարդակ, որը թույլ կտա ոչ միայն փոխհատուցել անհրաժեշտ ծախսերը, այլ նաև ձևավորել բավարար պահուստներ՝ լուծելով բանկի կապիտալիզացիայի խնդիրները:

Բանկն իր առաքելությունը տեսնում է որպես միջազգային չափանիշներով ռիսկերի կառավարման գործուն համակարգով, առաջընթաց տեխնոլոգիաներով զարգացող, օրինապաշտ, թափանցիկ կառույցի զարգացում, որը իր գործունեությամբ նպաստում է ոչ միայն ՀՀ բանկային համակարգի կայունությանը, այլև երկրի տնտեսության զարգացմանը:

1.9. Բանկի կանոնադրական կապիտալը և վերջինիս կառուցվածքը

Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի չափը կազմում է 25,635,343,200 ՀՀ դրամ, որը ներառում է 1,852,533 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 10,400 ՀՀ դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ բաժնետոմս յուրաքանչյուրը 15,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հայտարարած տեղաբաշխման ենթակա սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 2,000,000 (երկու միլիոն) սովորական բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 10,400 (յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հայտարարած տեղաբաշխման ենթակա արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 228,479 (երկու հարյուր քսանութ հազար չորս հարյուր յոթանասունինը) հատ հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, յուրաքանչյուրի լուծարային արժեքը անվանական արժեքի չափով, յուրաքանչյուրի համար դրա անվանական արժեքի նկատմամբ տարեկան 14 (տասնչորս) տոկոս վճարվող շահութաբաժնի չափով:

30.09.2019թ. դրությամբ բաժնետերերի կողմից վճարված է կանոնադրական կապիտալի 100%-ը:

30.09.2019թ. դրությամբ Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերի քանակը կազմում է 3,240 բաժնետեր:

1.10. Բանկի բիզնեսի նկարագիրը (մատուցված ծառայությունները)

<u>Համաձայն Բանկի կանոնադրության.</u>

Բանկը կարող է իրականացնել ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված բոլոր ֆինանսական գործառնությունները:

30.09.2019թ. դրությամբ Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 17 բանկերում:

Բանկն անդամակցում է հետևյալ միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերին՝ «MoneyGram», «Ria Money Transfers», «IntelExpress», «Unistream», «Converse Transfer», «Golden Money Transfer», «MoneyTun» և «Faster»:

1.11. Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացվում է ստորև.



Ազդագրի ներկայացման պահի դրությամբ Բանկն ունի 52 մասնաճյուղ, որոնցից 51-ը՝ ՀՀ տարածքում և 1-ը՝ ԼՂՀ-ում՝ Ստեփանակերտ քաղաքում:

1.12. Բանկի տրամադրության տակ եղած ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը.

հազ. դրամ

№	Ցուցանիշի անվանումը	30.06.2019	31.12.2018	31.12.2017	31.12.2016
1	Ակտիվներ, այդ թվում՝	237,394,369	221,697,397	190,802,799	146,182,358
2	Եկամտաբեր ակտիվներ	204,653,470	199,311,211	149,973,255	113,976,704
3	Հաճախորդներին տրված վարկեր	147,845,979	133,629,775	104,216,558	75,047,659
4	Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների	12,420,669	13,175,950	13,030,610	8,253,897

	նկատմամբ				
5	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ (Ներդրումային արժեթղթեր)	23,058,921	19,752,226	2,036,091	2,879,255
6	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,044,724	38,158,045	35,824,831	32,059,829
7	Կանխիկ դրամական միջոցներ	10,770,736	9,304,956	9,437,455	8,818,128
8	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	0	17,468	0	1,765
9	Հակադարձ հետգնման պայմանագրեր	5,521,355	3,882,703	4,296,862	4,552,427
10	Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	0	0	0	0
11	Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը (%)	86.21%	89.90%	78.60%	77.97%

Արժեզրկված (չաշխատող) վարկերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Բանկի հրապարակվող հաշվետվություններին կից ծանոթագրություններում (Ծանոթագրություն 16 Հաճախորդներին տրված վարկեր):

2. Բանկին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

2.1. Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- շուկայական ռիսկ
  - ✓ տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
  - ✓ արտարժութային ռիսկ,
  - ✓ գնային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- գործառնական ռիսկ,
- Հեղինակության ռիսկ,
- Վարակի ռիսկ,
- Ռազմավարական ռիսկ,
- Օրենսդրական, նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկ,

- Երկրի ընդհանուր և տնտեսական միջավայրի ռիսկ:

Բանկին առնչվող ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է սույն Ազդագրի Բաժին 3-ի («Բաժնետոմսեր թողարկողի մասին տեղեկատվություն») 2-րդ կետում («Ռիսկային գործոններ»):

2.2. Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված հնարավոր ռիսկերի ցանկը սպառիչ չէ և հավանական է նաև անկանխատեսելի բնույթի որոշակի այլ ռիսկերի առաջացումը և հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և սպասումներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով շուկայում բաժնետոմսերի շրջանառելիության՝ իրացվելիության անկմանը: Բանկի կողմից որպես առավել էական ռիսկեր դիտարկվում են.

ա) Բաժնետոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով, որի արդյունքում, բաժնետոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը՝ հանգեցնելով դրանց գնի անկմանը: Ներդրողը կարող է շուկայական տվյալ իրավիճակում առկա բաժնետոմսերի ցածր իրացվելիության պատճառով հնարավորություն չունենալ վաճառելու բաժնետոմսերը առանց էական կորուստների կամ ընդհանրապես հնարավորություն չունենալ դրանք վաճառելու:

բ) Արտարժութային ռիսկը, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Բաժնետոմսերը գնանշվելու և վճարվելու են ՀՀ դրամով, ուստի, այն ներդրողների համար, որոնց ֆինանսական հոսքերն այլ արժույթով են, տվյալ բաժնետոմսերը պարունակում են զգալի արտարժութային ռիսկեր:

գ) Տոկոսադրույքի ռիսկը, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, ինչը որպես այլընտրանքային ներդրման ուղղություն, անուղղակիորեն ազդում է բաժնետոմսերի գների վրա:

դ) Բանկի հեղինակության ռիսկը, որը անմիջական ազդեցություն ունի բաժնետոմսերի գրավչության և գնի վրա:

Թողարկվող արժեթղթերին առնչվող ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է սույն Ազդագրի Բաժին 2-ի («Թողարկվող բաժնետոմսերի մասին տեղեկատվություն») 1-ին կետում («Ռիսկային գործոններ»):

3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված հեռանկարային զարգացման ծրագրերի՝ դրանցում սահմանված նպատակների, սկզբունքների, գործունեության հիմնական ուղղությունների և խնդիրների լուծման ուղիների::

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև ISO/IEC 27001 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Բանկի ֆինանսական վիճակի 2016-2018թ.թ. փոփոխության միտումները ներկայացված են սույն ամփոփաթերթի 1-ին կետի 1.12 ենթակետում և 9-րդ կետում:

Նախատեսելով զարգացման բոլոր ոլորտների թե՛ քանակական, թե՛ որակական աճ, շարունակվելու է մեծ ուշադրություն դարձվել ռիսկերի կառավարման համակարգի, ներքին հսկողության համակարգի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, կորպորատիվ կառավարման արժեքների զարգացմանը, բանկային ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների կատարելագործմանը, միջազգային գործառնությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը:

31.03.2019թ. դրությամբ Բանկի կապիտալը կազմել է մոտ 37.5 մլրդ դրամ՝ աճելով տարվա վերջի համեմատ 13.6%-ով: Այլ ցուցանիշների գծով 2019թ. ընթացքում՝ (մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը) Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել և Բանկը պահպանում է ակտիվների և այլ հիմնական ցուցանիշների աճի միտումները:

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, դատական հայցեր, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ ունենալու Բանկի ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա առկա չեն, կազմակերպական էական փոփոխություններ չեն սպասվում:

4. Բանկի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ

Բանկի 2016թ.-ի, 2017թ.-ի և 2018թ.-ի աուդիտն իրականացրել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն, որի գտնվելու վայրը և կապի միջոցներն են.
«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Սրբուհի Հակոբյան
ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 4/6, հեռ. +374(10) 52 65 20, ֆաքս +374 (10) 52 75 20, www.deloitte.ru:

5. Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

5.1. Թողարկողի կառավարման մարմնի անդամները.

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- Բաժնետերերի ընդհանուր ժողով (այսուհետ՝ Ընդհանուր ժողով), որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում,

- Բանկի գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե վարչության նախագահն է,
- Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Բանկի խորհուրդը կազմված է վեց անդամներից.

№	անունը, ազգանունը	զբաղեցրած պաշտոնը	փորձառությունը
1	Սարիբեկ Սուքիասյան	Խորհրդի նախագահ	27 տարի
2	Ռուբեն Հայրապետյան	Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահի տեղակալ	16 տարի
3	Լուիզա Պետրոսյան	Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար	13 տարի
4	Արամ Մելիքյան	Խորհրդի անդամ	31 տարի
5	Պեր Ֆիշեր	Խորհրդի անդամ	29 տարի
6	Վահագն Խաչատուրյան	Խորհրդի անդամ	37 տարի

Բանկի վարչությունը կազմված է 9 անդամներից.

№	անունը, ազգանունը	զբաղեցրած պաշտոնը	փորձառությունը
1	Արամ Խաչատրյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն	12 տարի
2	Ռուբեն Բաղալյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի գործառնական գծով տեղակալ	16 տարի
3	Օնիկ Չիչյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տեղակալ	17 տարի
4	Արտակ Առաքելյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ	14 տարի
5	Աստղիկ Մանրիկյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի միջազգային և զարգացման գծով տեղակալ	13 տարի
6	Արփինե Փիլոսյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործառնական գծով տնօրենի տեղակալ	12 տարի
7	Միքայել Պողոսյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ	32 տարի
8	Հայկ Ավետիսյան	Վարչության անդամ, Ռազմավարության և ռիսկերի	14 տարի

		կառավարման վարչության պետ	
9	Վրեժ Ջհանգիրյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	12 տարի

5.2. Բանկի աշխատակիցները.

Բանկի աշխատակիցների ընդհանուր թիվը 30.09.19թ. դրությամբ կազմում է 900 աշխատակից:

5.3. Բանկի խոշոր բաժնետերերը.

№	ազգանունը, անունը, հայրանունը	մասնակցությունը սովորական բաժնետոմսերում	մասնակցությունը արտոնյալ բաժնետոմսերում
1	Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	28.32%	42.06%
2	Սուքիասյան Խաչատուր Ալբերտի	16.29%	23.55%
3	Սուքիասյան Ռոբերտ Ալբերտի	16.86%	15.55%
4	Սուքիասյան Էդուարդ Ալբերտի	10.66%	18.84%

6. Առաջարկվող կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության համար նախատեսված արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

արժեթղթերի տեսակը՝ *սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)*
արժեթղթերի քանակը՝ 30,800 հատ
արժեթղթերի ընդհանուր ծավալը (շուկայական արժեքով)՝ *500,500,000 ՀՀ դրամ*
արժեթղթերի ընդհանուր ծավալը (անվանական արժեքով)՝ *320,320,000 ՀՀ դրամ*
արժեթղթերի անվանական արժեքը՝ *10,400 ՀՀ դրամ*
արժեթղթերի արժույթը՝ *ՀՀ դրամ*
արժեթղթերի նպատակը՝ միջոցների ներգրավում
միջոցների օգտագործման նախատեսվող ուղիները՝ *Թողարկողի կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցները հիմնականում ուղղվելու են փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը, սպառողական վարկերի տրամադրմանը և պետական արժեթղթերում ներդրումների իրականացմանը:*

7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Թողարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է բաց բաժանորդագրության միջոցով:

Համաձայն օրենսդրության՝ Բանկի կողմից բաց բաժանորդագրության միջոցով քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքում Բանկի բաժնետերերը չունեն բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Եթե տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով, ապա Բանկի

կանոնադրությամբ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի համար կարող է նախատեսվել քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք՝ իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

Տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով: Բանկի կանոնադրությամբ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի համար քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք (իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերի քանակին համամասնորեն) նախատեսված չէ: Թողարկմանը զուգահեռ բաժնետերերի կողմից տնօրինվող բաժնետոմսերի վաճառք չի նախատեսվում:

8. Այլ էական տեղեկություններ ըստ բանկի հայեցողության, որոնք նշված չեն նախորդ կետերում

Բանկի կանոնադրական հիմնադրամին, բաժնետերերին, շահույթի բաշխմանը և կառավարման մարմիններին վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ Բանկի կանոնադրության 3-6 գլուխներում:

9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

հազ. դրամ

№	Ցուցանիշի անվանումը	2019 6 ամիս	2018	2017	2016
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,426,838	2,078,026	1,550,397	590,371
	Սեփական կապիտալի միջին մեծություն*	35,201,438	32,168,301	28,205,524	22,440,746
	Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	4.05%	6.46%	5.50%	2.63%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,426,838	2,078,026	1,550,397	590,371
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	229,545,883	206,029,485	167,249,185	124,162,992
	Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.62%	1.01%	0.93%	0.48%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,426,838	2,078,026	1,550,397	590,371
	Գործառնական եկամուտ	6,715,773	11,991,828	10,159,318	7,539,829
	Զուտ շահույթի մարժա (NPM), %	21.25%	17.33%	15.26%	7.83%
	Գործառնական եկամուտ	6,715,773	11,991,828	10,159,318	7,539,829
	Ընդհանուր ակտիվների միջին	229,545,883	206,029,485	167,249,185	124,162,992

	մեծություն*				
	Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	2.93%	5.82%	6.07%	6.07%
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	229,545,883	206,029,485	167,249,185	124,162,992
	Սեփական կապիտալի միջին մեծություն*	35,201,438	32,168,301	28,205,524	22,440,746
	Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.52	6.40	5.93	5.53
	Զուտ տոկոսային եկամուտ	4,744,547	8,742,031	6,840,338	5,503,870
	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն*	201,535,437	182,896,810	142,614,670	103,769,713
	Զուտ տոկոսային մարժա (NIM)	2.35%	4.78%	4.80%	5.30%
	Տոկոսային եկամուտ	9,876,575	17,664,310	14,121,975	11,359,949
	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն*	201,535,437	182,896,810	142,614,670	103,769,713
	Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	4.90%	9.66%	9.90%	10.95%
	Տոկոսային ծախսեր	5,132,029	8,922,279	7,281,637	5,856,079
	Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր*	158,994,567	160,428,957	119,139,531	86,677,966
	Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	3.23%	5.56%	6.11%	6.76%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,426,838	2,078,026	1,550,397	590,371
	Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	1,852,533	1,852,533	1,852,533	1,343,195
	Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.77	1.12	0.84	0.44
	Սպրեդ	1.67%	4.10%	3.79%	4.19%

*միջին եռամսյակային

Հավելված

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, անկախ աուդիտորական եզրակացությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշմամբ հաստատված հավելված 5

2019Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ

Ք.ԵՐԵՎԱՆ, ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂ. 23 /1

ARMECONOMBANK

Ծանոթագրություն 1. "Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում"

Իրավական դաշտ.

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 1991 թվականին ԽՍՀՄ Բնակտնտեսբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993թ.. "Հայպետառբանկ" ՓԲԸ) հիման վրա և 1995թ. վերակազմավորվել է որպես բաց բաժնետիրական ընկերության՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 1 արտոնագրային համարով:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 29 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 22 մասնաճյուղերը՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 մասնաճյուղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Ամիրյան 23/1:

Բանկի հիմնական գործունեությունը.

Հանդիսանալով ունիվերսալ ֆինանսավարկային կառույց՝ "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ իր հաճախորդներին առաջարկում է բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ: Բանկի ակտիվային գործառնությունների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային գործունեությանը: Բանկը վարկավորում է երկրի տնտեսության համարյա բոլոր ճյուղերը՝ պայմանավորված ներկայացվող ծրագրի ռիսկայնությամբ եւ հեռանկարով: Բանկն ակտիվ գործունեություն է ծավալել միջազգային վարկավորման ծրագրերով վարկավորման ուղղությամբ: Բանկը տրամադրում է ինչպես առևտրային, այնպես էլ սպառողական, հիփոթեքային վարկեր:

Գործարար միջավայրը

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ:

Միջազգային տնտեսական ճգնաժամը հանգեցրեց ՀՀ համախառն ներքին արդյունքի, ինչպես նաև արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ:

Կորպորատիվ կառավարում

Բանկի կառավարման մարմիններն են՝ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ որպես բանկի կառավարման բարձրագույն մարմին, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը և Գործադիր տնօրենը:

Բանկի խորհրդի կառուցվածքը և կազմը

Բանկի Խորհրդի նախագահ

Ս. Սուքիասյան

Բանկի Խորհրդի անդամներ

Արամ Մելիքյան

Լուիզա Պետրոսյան

Ռուբեն Հայրապետյան

Պեր Ֆիշեր

Բանկի տնօրինության կառուցվածքը և կազմը

Գործադիր տնօրեն	Ա. Խաչատրյան
Գործադիր տնօրենի տեղակալ՝	Ռ. Բաղալյան
Գործադիր տնօրենի տեղակալ՝	Օ. Չիչյան
Գործադիր տնօրենի տեղակալ՝	Ա. Առաքելյան
Գործադիր տնօրենի տեղակալ՝	Ա. Մանրիկյան
Գործադիր տնօրենի տեղակալ՝	Ա. Փիլոսյան

AEB ARMECONOMBANK

Գլխավոր հաշվապահ՝ Մ. Պողոսյան

Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ՝ Հ. Ավետիսյան

Իրավաբանական վարչության պետ՝ Վ. Ջհանգիրյան

Բանկի սեփականության կառուցվածքը և բաժնետերերի/մասնակիցների քանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում

Բանկի կանոնադրական կապիտալը 30.06.2019թ. դրությամբ կազմում է 25,635,343 հազ. ՀՀ դրամ: Այն ներառում է 1,852,533 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 10,400 ՀՀ դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ բաժնետոմս, յուրաքանչյուրը 15,000 ՀՀ դրամ անվանական արժեքով;

Նշանակալից մասնակիցներ

Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	28.32%
Սուքիասյան Խաչատուր Ալբերտի	16.29%
Սուքիասյան Էդուարդ Ալբերտի	10.66%
Սուքիասյան Ռոբերտ Ալբերտի	16.86%

Բանկի ղեկավարների վարձատրության քաղաքականությունը

Բանկում ղեկավարների վարձատրության հատուկ քաղաքականություն չի կիրառվում: Ղեկավար անձանց վարձատրությունը կատարվում է խորհրդի կողմից հաստատված հաստիքացուցակի հիման վրա:

Բանկի արտաքին աուդիտին վճարները

Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Բանկի խորհրդի ներկայացմամբ, իսկ արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը հաստատվում է Բանկի խորհրդի կողմից:

Ծանոթագրություն 2. "Հաշվապահական քաղաքականությունը"

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում և ներկայացվում են համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտերի և վերջինի

պատրաստման և ներկայացման սկզբունքների, ստանդարտների կիրառման ուղեցույցների և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերի: Ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: Ֆինանսական հաշվետվությունների առումով հաշվետու տարի է համարվում հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

Բանկում ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության) պատրաստվում են հաշվեգրման սկզբունքին համապատասխան:

Եկամուտների և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես "տոկոսային եկամուտ" և "տոկոսային ծախս"՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օվերդրաֆտների, օվերնայթների, վարկային գծերի, թղթակցային հաշիվների, բանկային հաշիվների, ցպահանջ ավանդների դիմաց տոկոսների հաշվեգրումն իրականացվում է գծային եղանակով, եթե Բանկը չի կարող կանխատեսել այդ ակտիվների ապագա դրամական հոսքերը: Արժեզրկված վարկերի տոկոսների հաշվեգրումը չի դադարեցվում: Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Բանկի տույժերի և տուգանքների գծով ստացվելիք գումարները հաշվեգրվում են եկամուտներին յուրաքանչյուր օր: Հաշվեգրվող գումարի չափի հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը:

Բանկի կողմից տույժերի և տուգանքների գծով վճարվելիք գումարները ծախս են ճանաչվում յուրաքանչյուր օր՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը:

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Այլ եկամուտներն ու ծախսերը, մասնավորապես՝ վարձավճարները, գովազդային, շենքի պահպանման, տեխնիկական սպասարկման պարտավորությունները, ինչպես նաև

փոխադրամիջոցների օգտագործած վառելիքի ծախսային պարտավորությունները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը կամ նախորդ ժամանակաշրջանի վճարումները: Ընդ որում, ոչ տոկոսային ծախսերի գծով, հաշվեգրումները ամսական մինչև 10,000 դրամ կազմելու դեպքում կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը, իսկ 10,000 դրամից ավելի դեպքում՝ օրական: Բանկը աշխատակիցների արձակուրդային վճարների գծով ծախսերի կուտակումը կատարում է յուրաքանչյուր օր:

Հիմնական միջոցների (այդ թվում՝ ֆինանսական վարձակալությամբ ստացված), վարձակալված հիմնական միջոցներին ուղղված կապիտալ ներդրումների և ոչ նյութական ակտիվների գծով ամորտիզացիոն հատկացումներն սույն Քաղաքականությամբ սահմանված չափերով իրականացվում են յուրաքանչյուր օր և ճշգրտվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Շահագործումից դուրս հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն հատկացումները Բանկի վարչության կողմից սահմանված չափերով իրականացվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են հաշվեգրման սկզբունքի համաձայն՝ դրանց հայտարարման պահին:

Արտարժութային գործառնությունների հաշվառում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են՝ կիրառելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ միջին փոխարժեքը: Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ կամ ծախս: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով, փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով:

Արտարժույթի առքի և վաճառքի փոխարժեքները սահմանվում են հաշվի առնելով ՀՀ միջբանկային շուկայում ձևավորված փոխարժեքների մեծությունը, առաջարկի և պահանջարկի ծավալները ՀՀ տարածքում, այլ գործոններ (շուկայի ուսումնասիրության հիման վրա կատարված կանխատեսումներ, ֆորս-մաժորային պայմաններ և այլն): Արտարժույթի փոխարժեքները սահմանելիս նշված գործոններից բացի, հիմք են ընդունվում նաև տվյալ պահին արտարժույթի միջազգային շուկայում ձևավորված այլ համակարգերում արտացոլված փոխարժեքները:

Հարկային հաշվառում

Շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի, պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարումների գծով հաշվառումը տարվում է ՀՀ հարկային օրենսգրքին համապատասխան:

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն՝ յուրաքանչյուր օրվա համար հաշվեգրվում է շահութահարկի պարտավորությունը հարկային շահույթի նկատմամբ (հաշվի առած "Հարկային օրենսգրքի" համաձայն եկամուտներից չնվազեցվող ծախսերը) և յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ այն ճշգրտվում է:

Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում: Հետաձգված հարկը ճանաչվում է յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը:

Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, երբ Բանկը՝

- ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարների հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք.
- մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ.
- հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկի կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի (մուտքագրումը) և կամ արտահոսքի (ելքագրումը) ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական

արժեքով, Բանկի կողմից ընդունված դրամարկղային գործառնությունները կանոնակարգող կարգով, ինչպես նաև այլ կարգերով և իրավական ակտերով նախատեսված և պատշաճորեն կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ կենտրոնական բանկում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9 <<Ֆինանսական գործիքներ>> ստանդարտն ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 1-ին և կիրառելի է այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Բանկը կիրառել է նոր ստանդարտը՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը հաշվետու տարվա սկզբի չբաշխված շահույթում և առանց համեմատական տեղեկատվությունը վերահաշվարկելու:

Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները կամ վաճառքները հաշվառվում են գործարքի ամսաթվի դրությամբ:

ՖՀՄՍ 9-ի համաձայն բոլոր պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման չափանիշին, սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման չափանիշին համապատասխանող պարտքային ֆինանսական ակտիվների համար սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգումն որոշվում է բիզնես մոդելի հիման վրա, որի համաձայն այդ գործիքները կառավարվում են .

- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով,
- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու և վաճառքի նպատակով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով,
- այլ նպատակով պահվող գործիքները, ներառյալ առևտրային ֆինանսական ակտիվները, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ բաժնային ֆինանսական ակտիվները պետք է դասակարգվեն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշում է կայացվել, առանց հետագայում վերանայելու իրավունքի, դրանք դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող: Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային գործիքներից ողջ իրացված և չիրացված շահույթն ու վնասը, բացառությամբ շահաբաժինների, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, առանց շահույթում կամ վնասում հետագա վերադասակարգման:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են, որպես հետագայում

ամորտիզացված արժեքով չափվող՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասակարգված ֆինանսական պարտավորությունների:

Այն ակտիվները, որոնք մինչև ստանդարտի ընդունվելը չափվել են իրական արժեքով, ստանդարտի կիրառումից հետո շարունակվել են չափվել իրական արժեքով:

Պարտքային արժեթղթերը, որոնք 31.12.2017թ. դրությամբ դասակարգված են եղել որպես վաճառքի համար մատչելի, ՖՀՄՍ 9-ով կդասակարգվեն իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, քանի որ Բանկը ակնկալում է ոչ միայն այդ ակտիվները պահել պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու համար, այլ նաև համեմատաբար հաճախակիորեն իրականացնել էական գումարով վաճառքներ:

Քանի որ վարկերը բավարարել են բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման չափանիշին, դրանք նոր ստանդարտի կիրառումից հետո կշարունակվեն չափվել ամորտիզացված արժեքով:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս.

Ֆինանսական ակտիվներից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, դրանց տոկոսագումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է կապիտալում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ որում Բանկը չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

8.1 Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, օպցիոնները: Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումն իրականացվում է ածանցյալ պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում, և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրերը Բանկի կողմից օգտագործվում են իր առևտրային գործունեության և դրամական միջոցների ընթացիկ կառավարման շրջանակներում: Նշված պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործառնություններ:

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի հաշվետվությունում, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածներում

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի արժեթղթեր, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածներում:

Հետգնման պայմանագրով ձեռքբերված արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ հոդվածներում:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են համապատասխան հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում:

ARMECONOMBANK

Վարձակալություն

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կարող է վարձակալել հող, շենք և տարածքներ, այլ հիմնական միջոցներ, ինչպես նաև դրանց գծով կատարում կապիտալ ներդրումներ: Վարձակալված միջոցների հաշվապահական հաշվառումը տարվում է համաձայն ՀՀ օրենսդրության:

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

Վարձակալված հողի, շենքի և տարածքների, այլ հիմնական միջոցների վրա կատարված այն ծախսումները, որոնք բարձրացնում են վարձակալված հիմնական միջոցի արժեքը, դիտվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ճանաչվում են ակտիվ: Նշված ծախսումներն ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

01.01.2019թ.-ից ուժի մեջ է մտնելու ՖՀՄՍ 16-ը, որում ներկայացվում է վարձակալական ձեռնարկումների և հաշվապահական մոտեցումների սահմանման համապարփակ մոդել՝

նախատեսված վարձակալի և վարձատուի համար : ՖՀՄՍ 16-ն ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի վարձակալության վերաբերյալ գործող ուղեցույցը, ներառյալ ՀՀՄՍ 17-ի Վարձակալություն և առնչվող մեկնաբանությունները :

ՖՀՄՍ 16-ում վարձակալությունը և ծառայության մատուցման պայմանագրերը տարբերակվում են՝ ելնելով նրանից, թե արդյոք սահմանված ակտիվը վերահսկվում է հաճախորդի կողմից: Գործառնական վարձակալության (արտահաշվեկշռային) և ֆինանսական վարձակալության (հաշվեկշռային) տարբերությունները վերացվում են վարձակալի հաշվապահական հաշվառման նպատակով, և այն փոխարինվում է այնպիսի մոդելով, որտեղ օգտագործման իրավունքով ակտիվը և համապատասխան պարտավորությունը պետք է ճանաչվեն վարձակալների կողմից՝ բոլոր վարձակալությունների համար, բացառության կարճաժամկետ վարձակալությունը և ցածրարժեք ակտիվների վարձակալությունը:

Օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով՝ հանած կուտակային մաշվածությունը և արժեզրկման կորուստները, որոնք ճշգրտվում են վարձակալության պարտավորությունների ցանկացած վերագնահատման համար: Վարձակալության պարտավորությունը սկզբնապես չափվում է այդ ամսաթվին չվճարված վարձակալական վճարների ներկա արժեքով: Ըստ այդմ, վարձակալության պարտավորությունը ճշգրտվում է ըստ տոկոսային և վարձակալական վճարների, ինչպես նաև վարձակալության փոփոխությունների ազդեցության, ի թիվս մնացածի: Ավելին, դրամական հոսքերի դասակարգման վրա նույնպես ազդեցություն կլինի, քանի որ գործառնական վարձակալության վճարներն ըստ ՀՀՄՍ 17 ստանդարտի, ներկայացվում են որպես գործառնական դրամական հոսքեր, մինչդեռ, ըստ ՖՀՄՍ 16-ի մոդելի, վարձակալական վճարները կառանձնացվեն մայր գումարի և տոկոսային բաժնի, որը կներկայացվի համապատասխանաբար որպես ֆինանսավորման և գործառնական դրամական հոսքեր:

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

Բանկը ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը իրականացնում է ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն և Բանկի խորհրդի կողմից հաստատված ""ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման" կանոնակարգով:

Հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ կատարվում են պահուստների ճշգրտումներ համաձայն ՖՀՄՍ-ների:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝

Վարկային պորտֆելի պահուստի ձևավորումը ենթադրում է վարկային ռիսկի գնահատում՝ վարկային պորտֆելի ենթապորտֆելների ժամանակային շարքերի վարքագծի և դրանց վրա ազդող մակրոտնտեսական գործոնների հիման վրա: Գնահատականների տրման համար կիրառվում է "staging" (վարկերի դասակարգումը ըստ ժամկետանց օրերի):

Յուրաքանչյուր ենթապորտֆելի պահուստի չափը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

ՊԱՀՈՒՍ = ՄՆԱՑՈՐԴ * EAD * PD * LGD

որտեղ՝

ՄՆԱՑՈՐԴ - տվյալ վարկային ենթապորտֆելի մնացորդային գումարը,

EAD – (exposure-at-default) գործակից, որի միջոցով ճշգրտվում է ենթապորտֆելի մնացորդային արժեքը,

PD – (probability of default) հավանականություն, թե տվյալ ենթապորտֆելի որ մասն է հակված դեֆոլտի, որտեղ դեֆոլտը համարժեք է 90+ օր ժամկետանց օրերին,

LGD – (loss-given-default) վնասի բերված արժեք՝ ըստ էֆֆեկտիվ տոկոսադրույքի, երբ վարկը դառնում է դեֆոլտ:

Հաշվարկվում են EAD30 և EAD90 գործակիցներ համապատասխանաբար Stage 1 և Stage 2 դասում գտնվող վարկերի համար՝ ըստ առանձնացված ենթապորտֆելների:

Վարկերի պահուստի գնահատականի հաշվարկման համար առանձնացվում են PD12Month և PDLifetime համապատասխանաբար Stage 1 և Stage 2 դասում գտնվող վարկերի համար:

Պետական պարտատոմսերի պորտֆելի պահուստի ձևավորումը կատարվում է հաշվի առնելով Moody’s վարկանշային գործակալության կողմից Հայաստանին տրված PD և LGD գործակիցները:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով: Արտարժույթով ձեռք բերված ոչ նյութական ակտիվները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող միջին փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը որոշվում է համաձայն ՖՀՄՍ 38-ի "Ոչ նյութական ակտիվ"՝ ակտիվի մշակման փուլում, եթե հնարավոր է ցուցադրել ներստեղծված ակտիվի համապատասխանությունը ՖՀՄՍ-ով առաջադրված պայմաններին: Ներստեղծված համակարգչային ծրագրերի սկզբնական արժեքը որոշվում է ակտիվի ճանաչման չափանիշներին համապատասխան:

Ոչ նյութական ակտիվի միավորի վերագրումը ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (օրինակ՝ համակարգչային ծրագրեր, լիցենզիաներ և վստահագրեր, հեղինակային իրավունքներ և այլն) իրականացվում է Գլխավոր հաշվապահի մեթոդական ցուցումների հիման վրա՝ ելնելով տվյալ միավորի օգտագործման նշանակությունից և նպատակից:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է ՖՀՄՍ-ով սահմանված ծախսերը: Ընդ որում, սկզբնական արժեքում կարող են ներառվել միայն այն

ծախսումները, որոնք կատարվել են այն հաշվետու եռամսյակում, որի ընթացքում ճանաչվում է տվյալ ակտիվը:

Ոչ նյութական ակտիվի վրա կատարված հետագա ծախսումները, որոնք համաձայն ՖՀՄՍ-ի պահանջների կարող են ավելացվել ոչ նյութական ակտիվի արժեքին, հաշվառվում են որպես կապիտալ ներդրումներ և ավելացվում են տվյալ ակտիվի արժեքին Բանկի Վարչության որոշմամբ:

Ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր միավորի մաշվածության ժամկետը որոշում է Բանկը՝ ելնելով ՖՀՄՍ-ով սահմանված չափանիշներից: Մասնավորապես, ներստեղծված համակարգչային ծրագրերի մաշվածության ժամկետը որոշելու համար հաշվի է առնվում շուկայում տվյալ պահին առկա նմանատիպ նպատակային նշանակություն ունեցող ծրագրերի օգտակար ծառայության ժամկետի մասին տեղեկատվությունը, Բանկում նախկինում գործող նմանատիպ ծրագրերի փաստացի օգտակար ծառայության ժամկետը, ՖՀՄՍ-ով նախատեսված այլ չափանիշներ:

Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամանակաշրջանը և մաշվածության հաշվարկման մեթոդը սահմանվում է ՖՀՄՍ-ի համաձայն, կնքված պայմանագրի գործողության ժամկետում, իսկ այդ ժամկետի բացակայության կամ դրա որոշման անհնարինության դեպքում այն ընդունվում է 10 տարի: Մաշվածության հաշվարկման մեթոդի փոփոխությունն իրականացվում է Բանկի Խորհրդի կողմից սույն Քաղաքականության մեջ համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով:

Ոչ նյութական ակտիվների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են Բանկի Խորհրդի որոշման հիման վրա:

Ֆինանսական հաշվետվություններում ներստեղծված ոչ նյութական ակտիվների վերաբերյալ ՖՀՄՍ-ով պահանջվող տեղեկատվության բացահայտումն իրականացվում է առանձին:

Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է "Հարկային օրենսգրքի" համաձայն: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն տարեկան տոկոսադրույքը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով: Արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող միջին փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում:

Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներառյալ ԱԱՀ-ի գումարները, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները,

որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Բանկին ետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից:

Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի հաշվառման նպատակով՝ արժեքի չափումը, ճանաչումը, հետագա ծախսումները, վերագնահատումները և դուրսգրումները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Բանկի ներքին ակտերով:

Հիմնական միջոցների միավորի վերագրումը ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (օրինակ՝ գույք և գրասենյակային սարքավորումներ, կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, փոխադրամիջոցներ և այլն) իրականացվում է գլխավոր հաշվապահի մեթոդական ցուցումների հիման վրա՝ ելնելով տվյալ միավորի օգտագործման ժամկետից, նշանակությունից և նպատակից:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: 2018թ. հունվարի 1-ից Բանկը սահմանում է հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

ARMECONOMBANK

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տարեկան տոկոսադրույք (%)
Շենքեր, շինություններ	50	2
Համակարգիչներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ՝ կապի միջոցներ, UPS մարտկոցներ, բան-կոմատներ, գույք-գրասենյակային սարքավորումներ և այլն	8	12.5
Այլ համակարգչային տեխնիկա՝ տպող բազմաֆունկցիոնալ սարքեր (պրինտեր, սկաներ, պատճենահանող սարքեր), POS տերմինալներ, մոդեմներ	3	33.3

Ցանցային սարքեր	5	20
Մինչև 50,000 դրամ արժողությամբ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	մինչև տվյալ տարվա ավարտը	

Մինչև 2013թ-ի հունվարի 1-ը շահագործման մեջ եղած հիմնական միջոցների մաշվածությունը, կապված օգտակար ծառայությունների ժամկետների վերանայման հետ, հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը (սկզբնական արժեքից հանած կուտակված մաշվածությունը) բաշխվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդով՝ նոր սահմանված օգտակար ծառայության մնացորդային ժամկետում: Վերջինս իրենից ներկայացնում է 2013թ-ի հունվարի 1-ից սահմանվող օգտակար ծառայության ժամկետի և շահագործման անցնելու ամսաթվից մինչև 2013թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի տարբերություն:

01.01.2013թ.-ից հետո ձեռքբերված հիմնական միջոցների համար սահմանվում է մնացորդային արժեք, որը կազմում է նրանց սկզբնական արժեքի 0.1%-ը, սակայն ոչ ավել 20 000 դրամ, բացառությամբ շենքերի և փոխադրամիջոցների, որոնց մնացորդային արժեքը սահմանվում է նրանց սկզբնական արժեքի 1%-ի չափով:

Մինչև 01.01.2013թ. ձեռքբերված հիմնական միջոցների համար սահմանվում է մնացորդային արժեք, որը կազմում է նրանց հաշվեկշռային արժեքի 0.1%-ը, սակայն ոչ ավել
20 000 դրամ, բացառությամբ շենքերի և փոխադրամիջոցների, որոնց մնացորդային արժեքը սահմանվում է նրանց հաշվեկշռային արժեքի 1%-ի չափով :

Հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվում է "Հարկային օրենսգրքի" համաձայն: Հիմնական միջոցների տվյալ խմբի ամորտիզացիոն տարեկան տոկոսադրույքը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

Հողի համար մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և

ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Բանկի հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման (ֆինանսական տարվա ընթացքում 25%) դեպքում դրանք վերագնահատվում են Բանկի Խորհրդի որոշման հիման վրա: Վերագնահատումն իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող անկախ կազմակերպության կողմից: Վերագնահատման արդյունքները Բանկի հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են ՖՀՄՍ-ով սահմանված կարգով: Վերագնահատման արդյունքում առաջացած աճը հաշվեգրվում է չբաշխված շահույթին Բանկի կողմից ակտիվն օգտագործելու ընթացքում՝ մաշվածության հաշվարկմանը զուգընթաց: Ընդ որում, հաշվեգրվող գումարի մեծությունը որոշվում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությամբ: Վերագնահատման արդյունքում առաջացած աճի հաշվեգրումը չբաշխված շահույթին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի արտացոլվում:

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում: Վարձակալված շենքերի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով 20 տարվա ընթացքում:

Բանկի հիմնական միջոցներում կապիտալ ներդրումների գծով ձեռավորված ակտիվները չեն ամորտիզացվում:

ARMECONOMBANK

Պաշարներ

Բանկի պաշարները ընդգրկում են՝

- արագամաշ առարկաները,
- ապրանքները, ներառյալ գրավի բռնագանձման արդյունքում Բանկի սեփականությանն անցած ապրանքները,
- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք պետք է օգտագործվեն Բանկի գործունեության ընթացքում:

Արագամաշ առարկաներին են վերաբերում այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքի որոշման ժամանակ Բանկը ընդունում և կիրառում է "Առաջինը մուտք՝ առաջինը ելք" ԱՄԱԵ (ՖԻՖՈ) բանաձևը: ԱՄԱԵ (ՖԻՖՈ) բանաձևը ենթադրում է, որ պաշարների միավորները, որոնք գնվել են առաջինը, ելքագրվում են առաջինը և, հետևաբար միավորները, որոնք մնում են պաշարներում հաշվետու ժամանակաշրջանի վերջում, վերջին գնվածներն են: Արագամաշ առարկաների արժեքը ծախսագրվում է շահագործման հանձնելու պահին:

Հաշվարկներ բանկի և մասնաճյուղերի միջև

Բանկի գլխավոր գրասենյակի և նրա մասնաճյուղերի փոխադարձ հաշիվները համադրվում են յուրաքանչյուր օր՝ ծրագրային եղանակով ստացվող հաշվետվության միջոցով: Համադրման արդյունքում հայտնաբերված սխալներն ուղղվում են տվյալ օրվա ընթացքում:

Հաշվապահական հաշվեկշիռ կազմելիս Բանկի գլխավոր գրասենյակի և նրա մասնաճյուղերի միջև հաշվարկների հաշիվները պարտադիր զրոյացվում են:

Բանկի գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի միջև հաշվարկների հաշիվները ենթակա են փակման շաբաթական կտրվածքով:

Բաժնետիրական կապիտալ և հետ գնված բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը ներառված են սեփական (ընդհանուր) կապիտալում: Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները արտացոլվում են սեփական կապիտալում այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են: Ընթացիկ տարվան վերաբերվող շահաբաժինները, որոնց վճարումը հայտարարվել է հաշվեկշռի ամսաթվից հետո, բացահայտվում են հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող իրադարձությունների ծանոթագրությունում: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է բաժնտոմսերի տիրապետողներին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթը հարաբերելով տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին:

Որոշակի դեպքերում և համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի Բանկը կարող է հետ գնել իր բաժնետոմսերը: Այս դեպքում վճարված փոխհատուցումը նվազեցվում է սեփական (ընդհանուր) կապիտալից և ներկայացվում է որպես հետգնված բաժնետոմսեր մինչև վերջինների իրացումը: Նշված բաժնետոմսերը հետագայում վաճառվելու դեպքում ստացված ցանկացած փոխհատուցումը ներառվում է սեփական (ընդհանուր) կապիտալում:

Ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես արտոնյալ բաժնետոմսերի գծով էմիսիոն եկամուտ:

Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են Կառավարության և Կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում, երբ դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է դառնում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Բանկը օրենսդրությամբ նախատեսված դեպքերում պատրաստում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ ՖՀՄՍ-ի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված "Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման կարգ"-ի համաձայն:

Սեգմենտային հաշվետվություններ

Բանկն օգտագործում է բիզնես-սեգմենտների (ըստ ֆիզիկական անձանց, կազմակերպություններին և մատուցվող բանկային ներդրումային ծառայությունների) տեղեկատվությունը որպես առաջնային ներկայացման ձև: Աշխարհագրական սեգմենտները հանդիսանում են երկրորդային ներկայացման ձև:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ զտված գործարքի հետ կապված ծախսումներով : Հետագայում թողարկված պարտքային արժեթղթերը չափվում են ամորտիզացված արժեքով և ցանկացած տարբերություն, որը առաջանում է ստացված զուտ փոխհատուցման և մարվող գումարների միջև, արտացոլվում է եկամուտների և ծախսերի հաշվետվությունում տվյալ արժեթղթերի շրջանառության ժամանակահատվածում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Համադրելի տեղեկատվություն

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվում են՝ ընթացիկ տարվա հետ համադրելիության ապահովման նպատակով:

Հաշվապահական հաշվառման ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Ֆինանսական տարվա վերջին աշխատանքային օրվա վիճակով կազմված հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, եթե անհրաժեշտություն է առաջանում կատարելու համապատասխան ճշգրտումներ՝ նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված հաշվապահական հաշվեկշռի մեջ, կատարվում են հետևյալ դեպքերում՝ Բանկի սեփական ուժերով էական սխալներ հայտնաբերելու դեպքում, էական սխալներ, որոնք հայտաբերվել են աուդիտորական կազմակերպության կողմից և հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Բանկի սեփական ուժերով էական սխալներ հայտնաբերելու դեպքում, եթե էական սխալի գումարը կախված է տվյալ գործարքի կամ հոդվածի չափից և բնույթից, և հաշվեկշռում արտացոլված ցուցանիշները էական չեն փոփոխվելու, և եթե այդ տեղեկատվության չբացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանասական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված հաշվապահական հաշվեկշռի մեջ փոփոխու թյուններ չեն կատարվում:

Եթե Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունները սահմանված կարգով հրապարակելուց հետո առաջանում կամ հայտնաբերվում են էական սխալներ, ապա նման դեպքերում ճշգրտումներ չեն կատարվում և համարվում է, որ նման տեղեկատվության վերաներկայացումն անիրագործելի է:

ARMECONOMBANK

Միջանկյալ Հաշվետվություն
Ֆինանսական վիճակի մասին
30 Հունիս 2019թ.
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող. 23 /1

Հազ. դրամ

	Անվանում	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված)
1	**Ակտիվներ**			
1.1	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	35,044,724	38,158,045
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ		98,566	116,058
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	12,420,669	13,175,950
1.4	Հակադարձ հետգնման պայմանագրեր	14.1	5,521,355	3,882,703
1.5	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	15		17,468
1.5.1	Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ		471,969	
1.6	Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	16	147,845,979	133,629,775
1.7	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	3,665,436	2,298,018
1.7.1	Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	17.1	19,393,485	17,454,208
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		719,349	802,163
1.10	Հիմնական միջոցներ	20	10,675,025	10,330,854
1.10.1	Ոչ նյութական ակտիվներ	20	495,841	506,593
1.12	Այլ ակտիվներ	21	1,041,971	1,325,562
	Ընդամենը՝ ակտիվներ		**237,394,369**	**221,697,397**
2	**Պարտավորություններ**			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	31,901,800	34,085,791
2.2	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	22.1	31,820,198	24,059,690
2.3	ՀՀ Կենտրոնական Բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	22.2	6,290,725	6,055,317
2.4	Հետգնման պայմանագրեր	22.3	22,274,376	20,519,048
2.5	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	100,455,842	95,828,768
2.6	Ստորադաս փոխառություն	23.1		3,382,149
2.7	Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		144,496	273,836
2.8	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	4,310,763	2,060,960
2.9	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն	25	13,017	
2.10	Վճարվելիք գումարներ	26	685,453	280,380
2.11	Հետաձգված հարկային պարտավորություններ	11	808,985	849,982
2.12	Պահուստներ	30	59,554	61,891
2.13	Այլ պարտավորություններ	27	1,239,601	1,226,268
	Ընդամենը՝ պարտավորություններ		**200,004,810**	**188,684,080**
3	**Կապիտալ**			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	25,635,343	22,266,343
3.2	**Էմիսիոն եկամուտ**			
3.3	Պահուստներ՝			
3.3.1	Գլխավոր պահուստ		3,105,000	3,000,000
3.3.2	Վերագնահատման պահուստներ		4,670,806	4,556,554
3.4	**Չբաշխված շահույթ (վնաս)**		3,978,410	3,190,420
	Ընդամենը՝ կապիտալ		**37,389,559**	**33,013,317**
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**237,394,369**	**221,697,397**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ Մ.Պողոսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2019 թ.հուլիսի 12

Միջանկյալ Հաշվետվություն

Ֆինանսական արդյունքների մասին

"30" Հունիս 2019թ.

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ, Ք.Երևան, Ամիրյան 23/1

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրություն	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	5,107,490	9,876,575	4,109,567	8,041,966
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(2,623,484)	(5,132,029)	(2,226,657)	(4,386,135)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**2,484,006**	**4,744,547**	**1,882,909**	**3,655,832**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	599,163	1,128,094	741,687	1,407,714
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(154,171)	(275,612)	(118,923)	(246,458)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**444,992**	**852,482**	**622,763**	**1,161,255**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	537,802	1,005,340	441,694	754,001
Այլ գործառնական եկամուտներ	6	57,239	113,405	59,818	128,432
Գործառնական եկամուտներ		**3,524,039**	**6,715,773**	**3,007,185**	**5,699,520**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	100,361	(93,451)	(25,670)	(98,765)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,810,320)	(3,548,268)	(1,672,331)	(3,250,432)
Այլ գործառնական ծախսեր	9	(648,266)	(1,225,469)	(626,030)	(1,178,291)
Գործառնական շահույթ		1,165,814	1,848,585	683,153	1,172,032
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**1,165,814**	**1,848,585**	**683,153**	**1,172,032**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(285,924)	(421,747)	(167,151)	(218,417)
Ժամանակաշրջանի շահույթ		**879,890**	**1,426,838**	**516,003**	**953,614**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ Մ.Պողոսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2019 թ.հուլիսի 12

Միջանկյալ հաշվետվություն

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

"30" Հունիս 2019թ.

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ, Ք.Երևան, Ամիրյան 23/1

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրություն	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ		23,631	(305,479)	(399,274)	(81,735)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկում հարկումից հետո		764	40,578	5,903	5,903
Ոչ ընթացիկ ակտիվների գծով օգուտներ հարկումից հետո			394,415	3,787	(15,149)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ վերագնահատումների գծով շահութահարկ		(4,726)	61,096	79,855	16,347
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		19,669	190,610	(309,729)	(74,634)
Համապարփակ ֆինանսական արդյունք		**899,559**	**1,617,448**	**206,273**	**878,980**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ Մ.Պողոսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2019 թ.հուլիսի 12

Միջանկյալ Հաշվետվություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
"30" Հունիս 2019թ.
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող.23 /1

Հազ. դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ		Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը	Ընդամենը կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Զուտ գումարը							
Հոդվածներ	1	3	4	5	7	9	10	12	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)									
Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2018թ. (ստուգված)	13,708,744	13,708,744	33,438	6,000,000	1,531,277	3,157,776	4,597,371	29,028,606	29,028,606
ՖՀՄՄ- ի փոփոխության արդյունքում առաջացած պահուստների գումար					208,675		(32,151)	176,524	176,524
Վերահաշվարկված մնացորդը	13,708,744	13,708,744	33,438	6,000,000	1,739,952	3,157,776	4,565,220	29,205,130	29,205,130
Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	3,000,000	3,000,000						3,000,000	3,000,000
Կապիտալի ավելացում ԲՏԱ բանկի միացման արդյունքում								-	-
Համապարփակ եկամուտ		-	-	-	(59,485)	(15,149)	953,614	878,980	878,980
Շահութաբաժիններ		-	-	-			(277,880)	(277,880)	(277,880)
Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	-	(44,230)	44,230	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում						(44,230)	44,230	-	-
Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30/06/2018թ. (չստուգված)	16,708,744	16,708,744	33,438	6,000,000	1,680,467	3,098,397	5,285,184	32,806,230	32,806,230
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)									
Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2019թ. (ստուգված)	22,266,343	22,266,343		3,000,000	1,501,220	3,055,334	3,190,420	33,013,317	33,013,317
ՖՀՄՄ- ի փոփոխության արդյունքում առաջացած պահուստների գումար	-	-	-	-		-		-	-
Վերահաշվարկված մնացորդը	22,266,343	22,266,343	-	3,000,000	1,501,220	3,055,334	3,190,420	33,013,317	33,013,317
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի	3,369,000	3,369,000	-	-	-	-	-	3,369,000	3,369,000
Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	3,369,000	3,369,000		-	-	-		3,369,000	3,369,000
Համապարփակ եկամուտ		-	-	-	(203,803)	394,415	1,426,836	1,617,448	1,617,448
Շահութաբաժիններ		-	-	-		-	(610,206)	(610,206)	(610,206)
Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	105,000	-	(76,360)	(28,640)	-	-
Մասհանումներ գլխավոր պահուստին		-	-	105,000		-	(105,000)	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում		-				(76,360)	76,360	-	-
Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30.06.2019թ. (չստուգված)	25,635,343	25,635,343	-	3,105,000	1,297,417	3,373,389	3,978,410	37,389,559	37,389,559

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ Մ.Պողոսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2019 թ.հուլիսի 12

Միջանկյալ Հաշվետվություն
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
30 հունիս 2019թ.
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող. 23 /1

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրություն	Հաշվետու ժամանակաշրջան (չստուգված)	Նախորդ ժամանակաշրջան (չստուգված)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Տարվա շահույթ		1,426,838	953,614
Ճշգրտումներ՝			
Շահութահարկի գծով ծախս		421,747	218,417
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից վնաս		93,451	98,765
Մաշվածություն և ամորտիզացիա		398,044	351,717
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/(վնաս)		(11,888)	3,157
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ		35,830	(34,073)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		(317,533)	(320,834)
Այլ եկամուտ		(16,933)	(395,750)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական ներհոսք՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները		**2,029,556**	**875,014**
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ			
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Պահանջներ ֆինանսական կազմակերպություններից		866,499	588,970
Հակադարձ հետգնման պայմանագրեր		(1,632,196)	4,297,513
Հաճախորդներին տրված վարկեր		(13,375,919)	(20,394,965)
Հետգնման պայմանագրեր		(1,939,277)	201,452
Այլ ակտիվներ		487,033	732,227
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		(2,318,545)	5,218,673
Հետգնման պայմանագրեր		1,751,638	(2,663,079)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		3,975,539	(1,734,210)
Այլ պարտավորություններ		26,813	28,010
Գործառնական գործունեությունում օգտագործված դրամական միջոցներ՝ նախքան հարկումը		**(10,128,858)**	**(12,850,395)**
Վճարված շահութահարկ		(622,190)	(561,848)
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(10,751,048)**	**(13,412,243)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվողն վաճառքի համար մատչելի արժեթղթեր նվազում (ավելացում)		(805,502)	360,550
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)		(470,537)	49,957
Հիմնական միջոցների ձեռքբերում		(558,298)	(1,073,194)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		66,197	121,105
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(49,709)	(49,679)
Ներդրումային գործունեությունում (օգտագործված) /(գործունեությունից ստացված) զուտ դրամական միջոցներ		**(1,817,848)**	**(591,261)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից վարկերի ստացում		235,408	408,835
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերից մուտքեր/մարում		7,434,117	5,658,371
Ստորադաս փոխառությունից (մարումներ)/ մուտքեր		(3,367,904)	(3,046,696)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		2,198,017	400,052
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում		3,369,000	3,000,000
Վճարված շահաբաժիններ		(225,205)	(3,544)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		9,643,433	6,417,017
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		(210,918)	(128,890)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**(3,136,381)**	**(7,715,378)**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ	13_2	**38,194,407**	**35,824,831**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ	13_2	**35,058,026**	**28,109,453**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) **Ա. Խաչատրյան**

Գլխավոր հաշվապահ **Մ.Պողոսյան**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2019 թ հուլիսի 12

Ծանոթագրություն 3. "Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ"

Հազ. դրամ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	171,153	297,347	119,578	232,848
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	4,294,343	8,356,915	3,330,476	6,493,454
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	543,575	1,038,632	568,040	1,151,341
Տոկոսային եկամուտ "Ռեպո" պայմանագրերից	89,157	165,701	84,079	151,616
Այլ տոկոսային եկամուտ	9,262	17,980	7,394	12,707
Ընդամենը	**5,107,490**	**9,876,575**	**4,109,567**	**8,041,966**
Տոկոսային և նմանատիպ ծախսեր				
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպութ	1,168,654	2,269,111	796,364	1,555,727
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	1,076,747	2,107,388	987,504	1,918,022
Տոկոսային ծախսեր "Ռեպո" պայմանագրերի դիմաց	324,521	576,022	247,532	491,928
Տոկոսային ծախսեր ստորադաս փոխառությունների դիմաց	-	84,558	173,784	365,742
Տոկոսային ծախսեր կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց	53,563	90,841	18,522	35,354
Այլ տոկոսային ծախսեր	-	4,109	2,951	19,362
Ընդամենը	**2,623,485**	**5,132,029**	**2,226,657**	**4,386,135**
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**2,484,005**	**4,744,546**	**1,882,910**	**3,655,831**

Ծանոթագրություն 4. "Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր"

Հազ. դրամ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Դրամարկղային գործառնություններից	45,249	103,106	51,138	90,383
Հաշվարկային ծառայություններից	435,611	823,891	322,174	625,614
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից	24,217	44,267	38,241	78,140
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	945	1,020	207	592
Վճարային քարտերի սպասարկումից	35,141	62,479	30,342	53,641
Այլ կոմիսիոն վճարներ	58,000	93,331	299,585	559,344
Ընդամենը	**599,163**	**1,128,094**	**741,687**	**1,407,714**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր				
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	1,223	2,530	920	2,116
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	67,440	127,674	45,219	87,632
Երաշխիքների, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնությունների, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	6,671	13,364	19,610	52,309
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	12,945	20,430	11,492	22,545
Այլ կոմիսիոն վճարներ	65,891	111,614	41,682	81,856
Ընդամենը	**154,170**	**275,612**	**118,923**	**246,458**
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**444,993**	**852,482**	**622,764**	**1,161,255**

Ծանոթագրություն 5. "Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ"

Հազ. դրամ

Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝	128,647	222,816	40,061	64,255
բաժնետոմսերից			-	
պարտքային արժեթղթերից			-	
-ածանցյալներից	128,647	222,816	40,061	64,255
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(274,104)	7,839	171,216	(36,923)
Ընդամենը	**(145,457)**	**230,655**	**211,277**	**27,332**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներից				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝	233,937	379,317	249,787	363,722
պարտքային արժեթղթերից	233,937	379,317	249,787	363,722
ածանցյալներից	-			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների	(52,055)	(61,784)	(36,497)	(42,887)

Ընդամենը	**181,882**	**317,533**	**213,290**	**320,835**
Արտարժութային գործառնություններից				
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	255,750	481,617	193,142	369,664
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	238,591	(35,827)	(169,144)	34,073
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	1,129	2,268	411	9,911
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	5,909	9,094	(7,282)	(7,814)
Ընդամենը	**501,379**	**457,152**	**17,127**	**405,834**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	**537,804**	**1,005,340**	**441,694**	**754,001**

Ծանոթագրություն 6. "Այլ գործառնական եկամուտ"

Հազ. դրամ

Այլ գործառնական եկամուտ	**01/04/2019-30/06/2019**	**01/01/2019-30/06/2019**	**01/04/2018-30/06/2018**	**01/01/2018-30/06/2018**
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	37,451	78,181	46,153	96,692
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	-			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	6,961	11,888	3,653	(3,157)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ				
Այլ եկամուտներ*	12,827	23,336	10,012	34,897
Ընդամենը	**57,239**	**113,405**	**59,818**	**128,432**

Այլ եկամուտներ* տողում արտացոլված են քաղվածքների, չեկային և ավանդային գրքույկների, տեղեկանքների տրամադրումից և այնպիսի տարաբնույթ ծառայություններից գանձվող գումարները, որոնց համար հատուկ եկամտային հաշիվներ նախատեսված չեն:

Ծանոթագրություն 7. "Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ"

Հազ. դրամ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ(Ծանոթագրություն 13)	**01/04/2019-30/06/2019**	**01/01/2019-30/06/2019**	**01/04/2018-30/06/2018**	**01/01/2018-30/06/2018**
Սկզբնական մնացորդ	13,414	7,729	4,306	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(111)	5,574	(1,421)	2,885
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ				
Պահուստի օգտագործում				
Վերջնական մնացորդ	**13,303**	**13,303**	**2,885**	**2,885**
Բանկերի և Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով (Ծանոթագրություն 14)	**01/04/2019-30/06/2019**	**01/01/2019-30/06/2019**	**01/04/2018-30/06/2018**	**01/01/2018-30/06/2018**
Սկզբնական մնացորդ	13,414	157,780	2,782	
IFRS 9-ի ազդեցությունը պահուստների վրա				5,758
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	141,744	(2,622)	2,716	(260)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ				
Պահուստի օգտագործում				
Վերջնական մնացորդ	**155,158**	**155,158**	**5,498**	**5,498**
Հաճախորդներին տրված վարկերի, փոխատվությունների գծով (Ծանոթագրություն 16)	**01/04/2019-30/06/2019**	**01/01/2019-30/06/2019**	**01/04/2018-30/06/2018**	**01/01/2018-30/06/2018**
Սկզբնական մնացորդ	2,031,019	1,508,428	1,383,637	1,605,120
IFRS 9-ի ազդեցությունը պահուստների վրա				228,176
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(496,906)	36,701	111,971	175,480
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	52,082	107,517	58,377	136,052
Պահուստի օգտագործում	(77,972)	(144,423)	(63,241)	(654,084)
Վերջնական մնացորդ	**1,508,223**	**1,508,223**	**1,490,744**	**1,490,744**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ(Ծանոթագրություն 17)	**01/04/2019-30/06/2019**	**01/01/2019-30/06/2019**	**01/04/2018-30/06/2018**	**01/01/2018-30/06/2018**
Սկզբնական մնացորդ	42,257	227,486	223,432	-
IFRS 9-ի ազդեցությունը պահուստների վրա				213,366
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	235,986	50,757	(8,854)	1,212
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ				
Պահուստի օգտագործում				
Վերջնական մնացորդ	**278,243**	**278,243**	**214,578**	**214,578**
Այլ ակտիվների գծով (Ծանոթագրություն 21)	**01/04/2019-30/06/2019**	**01/01/2019-30/06/2019**	**01/04/2018-30/06/2018**	**01/01/2018-30/06/2018**
Սկզբնական մնացորդ	13,217	9,468	16,611	15,800
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	1,629	5,378	(5,103)	(4,723)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	1,427	1,427	276	881
Պահուստի օգտագործում	(78)	(78)	(22)	(196)
Վերջնական մնացորդ	**16,195**	**16,195**	**11,762**	**11,762**

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով(Ծանոթագրություն 30)	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Սկզբնական մնացորդ	42,257	61,891	101,221	-
IFRS 9-ի ազդեցությունը պահուստների վրա				103,411
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	17,297	(2,337)	(73,639)	(75,829)
Պահուստի օգտագործում				
Վերջնական մնացորդ	59,554	59,554	27,582	27,582
Ընդամենը զուտ մասհանումներ պահուստներին	**(100,361)**	**93,451**	**25,670**	**98,765**

Ծանոթագրություն 8. "Ընդհանուր վարչական ծախսեր"

Հազ. դրամ

Ընդհանուր վարչական ծախսեր	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	1,147,615	2,220,481	948,746	1,868,354
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով				
Վերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր	75	623	1,465	4,341
Գործուղման ծախսեր	11,858	18,125	22,633	29,071
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	160,989	321,065	159,128	319,603
Ապահովագրության ծախսեր	35,879	68,130	32,687	64,559
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	52,101	151,501	139,601	252,060
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	167,382	337,490	167,203	344,501
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	12,275	22,700	9,984	26,481
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	27,265	53,947	23,413	48,103
Տրանսպորտային ծախսեր	37,899	71,750	39,372	74,678
Ծախսեր հարկերի (բացառությամբ՝ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	97,142	171,173	66,451	127,391
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	39,769	66,099	43,511	65,296
Այլ վարչական ծախսեր	20,071	45,184	18,137	25,994
Ընդամենը	**1,810,320**	**3,548,268**	**1,672,331**	**3,250,432**

Բանկի աշխատակիցների միջին թվաքանակ և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափ

	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Բանկի աշխատակիցների միջին թվաքանակ	823	817	793	788
Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափ (հազ դրամ)	417	413	382	376

Ծանոթագրություն 9. "Այլ գործառնական ծախսեր"

Հազ. դրամ

Այլ գործառնական ծախսեր	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Վճարված տուգանքներ և տույժեր			141	141
Ինկասացիայի համար նատարված վճարումներ	86,754	173,004	86,250	172,500
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	162,862	329,211	211,064	371,503
Ֆակտորինգի գծով ծախսեր	-		-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	206,324	398,044	177,158	351,718
Կորուստներ ակտիվների արժեզրկումից	-		-	-
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	68,185	114,596	57,561	105,875
Այլ ծախսեր	124,141	210,614	93,856	176,554
Ընդամենը	**648,266**	**1,225,469**	**626,030**	**1,178,291**

Այլ գործառնական ծախսեր ծանոթագրության այլ ծախսեր տողում հիմնականում արտացոլված են VISA վճարահաշվարկային համակարգին անդամագրվելու համար սահմանված եռամսյակային վճարները, ինչպես նաև վճարային պլաստիկ քարտերի ձեռքբերման համար կատարված ծախսերը:

Ծանոթագրություն 10. "Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս"

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանում այս ծանոթագրության համար ներկայացվելիք տվյալներ առկա չեն:

Ծանոթագրություն 11. "Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)"

Հազ. դրամ

Շահութահարկի գծով ծախս	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Ընթացիկ հարկի գծով ծախս	249,704	450,373	177,500	282,128
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամա նակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումներ	35,100	42,477	-	(20,410)
Հետաձգված հարկի գծով ծախս	1,120	(71,103)	(10,350)	(43,301)
Ընդամենը	**285,924**	**421,747**	**167,150**	**218,417**

	01.04.2019 30.06.2019	Արդյունավետ դրույքաչափ (%)	01.01.2019 30.06.2019	Արդյունավետ դրույքաչափ (%)	01.04.2018 30.06.2018	Արդյունավետ դրույքաչափ (%)	01.01.2018 30.06.2018	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահութ մինուս հանում	1,165,814		1,848,585		683,153		1,172,032	
Շահութահարկ՝ դրույքաչափով	233,163	20.00	369,717	20.00	136,631	20.00	234,406	20.00
Չհաշվեկշռվող եկամուտներ	-	-			-	-	(2,736)	(0.23)
Չնվազեցվող ծախսեր	66,279	5.69	5,987	0.32	(650)	(0.10)	19,746	1.68
Բազասական(դրական) փոխառժեքային տարբերություն	(47,718)	(4.09)	7,166	0.39	33,830	4.95	(6,814)	(0.58)
Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում	35,100	3.01	42,477	2.30	-	-	(20,410)	(1.74)
Այլ արտոնություններ	(900)	(0.08)	(3,600)	(0.19)	(2,660)	(0.39)	(5,775)	(0.49)
Շահութահարկի գծով ծախս	285,924	24.53	421,747	22.81	167,151	24.47	218,417	18.64

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը

Հազ. դրամ

	Մնացորդը նախորդ ժամանակա-շրջանի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալով ճանաչված	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջան ի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ. առ թվում՝	**285,256**	**27,604**	**-**	**312,860**
Հիմնական միջոցների գծով				-
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	146,060	34,861		**180,921**
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների գծով	131,906	(2,627)		129,279
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,290	(4,630)		2,660
Արժեթղթերի պահուստ				-
Հետաձգված հարկային պարտավորություններ. առ թվում՝	**(1,135,238)**	**43,499**	**(30,106)**	**(1,121,845)**
Ներդրումային արժեթղթեր	(329,809)		61,096	(268,713)
Հիմնական միջոցներ	(757,410)	14,841	(91,202)	(833,771)
Հիմնական միջոցների գծով				-
Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստի գծով				
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ		(508)		(508)
Պայմանական պարտավորություններ	(30,621)	14,252		(16,369)
Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(17,398)	14,914		(2,484)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	**(849,982)**	**71,103**	**(30,106)**	**(808,985)**

Ծանոթագրություն 12. "Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ"

Հազ. դրամ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	01/04/2019-30/06/2019	01/01/2019-30/06/2019	01/04/2018-30/06/2018	01/01/2018-30/06/2018
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	879,890	1,426,838	516,003	953,614
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	222,304	332,327	222,304	222,304
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	657,586	1,094,511	293,699	731,310
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	1,852,533	1,852,533	1,852,533	1,852,533
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	**0.35**	**0.59**	**0.16**	**0.39**

Վարկավորման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պարբերաբար իրականացվում է տրամադրված վարկերի մոնիտորինգ: Մոնիտորինգը իրականացվում է բանկի հատուկ ստորաբաժանման՝ վարկերի մոնիտորինգի բաժնի կողմից: Վարկերի ընթացիկ մոնիտորինգը անհրաժեշտության դեպքում իրականացվում է վարկային մասնագետների կողմից:

Կիրառվում է մոնիտորինգի երկու տեսակ՝
1. Փաստացի այցելությունների միջոցով մոնիտորինգ:
2. Հեռախոսային մոնիտորինգ:
Մոնիտորինգի ընթացքում բաժնի մասնագետների կողմից պարզաբանվում են հետևյալ
2. Տեղեկատվություն վարկառուի շուկայում դիրքի փոփոխության վերաբերյալ (մրցակիցներ, գնային տատանումներ, իրացում և այլն):
3. Ըստ փուլերի տրամադրվող վարկերի, ինչպես նաև գործող վարկերի առկայության դեպքում, նախքան հերթական փուլի կամ նոր վարկի տրամադրումը, իրականացվում է նախկինում տրված վարկի մոնիտորինգ (վերլուծություն):
4. Փոփոխություններ կապված մատակարարների, սպառողների կազմի, հումքի գների հետ:

5. Վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող այլ ցուցանիշներ:
Մոնիտորինգի ընթացքում վարկի ոչ նպատակային օգտագործման կամ վարկառուի կողմից բանկին ոչ ստույգ տեղեկատվություն ներկայացման դեպքերի բացահայտման ժամանակ փուլերով տրամադրվող վարկերի դեպքում կարող է դադարեցվել հետագա վարկավորումը կամ կարող է դադարեցվել վարկային պայմանագրի գործողությունը և իրականացվել վարկի, առնտրային նպատակով տրամադրված վարկային գծի և հաշվարկված տոկոսագումարների վաղաժամկետ մարում՝ հիմք ընդունելով գրավի պայմանագրով վերապահված իրավունքները:

Գրավի գնահատումը իրականացվում է գնահատման թույլտվություն ունեցող մասնագիտացված անկախ գնահատող կազմակերպությունների կողմից: Գույքերի գնահատումը արտացոլում է շուկայում առկա իրավիճակը՝ հաշվի առնելով գույքերի գների կանխատեսումը:

0

Հաճախորդների հետ կնքվող վարկային և գրավի պայմանագրերում առկա է դրույթ գույքերի պարտադիր ապահովագրության վերաբերյալ:
Դուրս գրված վարկերի հավաքագրումը իրականացվում է վարկավորման և միջոցների ներգրավման վարչության խնդրահարույց վարկերի բաժնի և անվտանգության վարչության կողմից համատեղ:

8) "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ում վարկավորման գործընթացը ներառում է վարկային ռիսկերը հայտնաբերելու համար համապատասխան բոլոր ազդակները:
Վարկային ռիսկի կառավարումը Բանկում կատարվում է հետևյալ հիմնական ընթացակարգերով՝
1. Վարկավորվող օբյեկտի խելամիտ բացահայտման գործընթաց,
2. Վարկային փաստաթղթերի ստանդարտ փաթեթի հավաքագրում,
3. Վարկերի մոնիտորինգ,
4. Պրոբլեմային վարկերի մարման գործընթաց:
Վերոնշյալ գործընթացների արդյունքում բացահայտվում և գնահատվում է փոխառուի իրավունակությունը, վարկի նպատակը, փոխառուի վարկունակությունը և վարկի մարման աղբյուրները, փոխառուի հետ կապված անձանց գծով առկա ռիսկերի բացահայտում, փոխառուի վարկային պատմությունը, ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու փորձառությունը, դիրքը շուկայում, գրավի առարկայի համապատասխանությունը:
Վերոնշյալ գործընթացների արդյունավետության բարձրացմանը նպաստում է նաև այն, որ բանկի կողմից վարկավորվող հաճախորդների գործունեությունը շատ դեպքերում փոխկապակցված է և բանկը հնարավորություն է ունենում ստուգելու հաճախորդի կողմից ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը նրա հետ առնչվող /մատակարար, գնորդ կամ մրցակից հանդիսացող/ հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվության հետ համեմատելու միջոցով:

Շուկայական ռիսկ

1) շուկայական ռիսկի բանկի սեփական սահմանումը

Շուկայական ռիսկը արտարժութային, տոկոսադրույքի և գնային ռիսկն է, որը հետևանք է համապատասխանաբար՝ փոխարժեքի, տոկոսադրույքների և կապիտալի գործիքների գների տատանման:

2) շուկայական ռիսկի չափման և գնահատման մեթոդները

Արտարժույթի ռիսկ

Արտարժութային ռիսկի և դիրքերի կառավարման արդյունավետության գնահատում:

Արտարժութային ռիսկի գնահատման VAR մոդելի հաշվարկներն իրականացվում են օրական կտրվածքով, որոնց համար հիմք են հանդիսանում արտարժույթների փոխարժեքների նախորդ ժամանակահատվածի տվյալների ժամանակային շարքերը և արտարժութային դիրքերի վերաբերյալ տվյալները: Որպես առանձին արտարժութային դիրքի գծով ռիսկի բնութագրիչ դիտվում է առաջիկա մեկ (տաս) օրվա համար փոխարժեքների տատանման հետևանքով վերագնահատման վնասի հնարավոր առավելագույն մեծությունը տրված հուսալիության մակարդակի պայմաններում: Մոդելի հաշվարկներն իրականացվել են 99% հուսալիության մակարդակի պայմաններում: Մոդելի շրջանակներում հաշվարկվում է արտարժույթների փոխարժեքների տատանումների կոռելյացիոն մատրիցը, որի հիման վրա իրականացվում է արտարժութային դիրքերից առաջացող հնարավոր առավելագույն ընդհանուր վնասի (արտարժութային ակտիվների և պարտավորությունների փաթեթի ռիսկի) գնահատում:

Հաշվետու եռամսյակի արդյունքներով միջին օրական հնարավոր առավելագույն վնասն (արտարժութային ռիսկը) ըստ առանձին արտարժութային դիրքերի և արտարժութային ակտիվների և պարտավորությունների փաթեթի, 99% հուսալիության պայմաններում կազմել է.

Հազ. դրամ

Հաշվետու ժամանակաշրջան	USD	GBP	EUR	CHF	KZT	AED	RUB	GEL	XAU	Համախառն VAR
2019թ. I եռ.	1,340.36	95.29	180.75	112.37	28.04	1.97	873.82	173.90	53.84	1,719.71
2019թ. II եռ.	1,644.49	194.49	212.94	92.24	39.10	1.89	1,015.46	230.03	15.24	2,128.44
աճ/նվազում	304.13	99.20	32.19	-20.13	11.06	-0.08	141.64	56.14	-38.60	408.73

Ներկայացվում է բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

30/06/2019

Հազ. դրամ

	ՀՀ դրամ	USD	EUR	RUB	Այլ արժույթ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,057,403	8,313,441	8,455,052	1,135,376	83,452	**35,044,724**
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ	443				98,123	**98,566**
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ	2,619,871	4,281,727	5,224,103	294,968		**12,420,669**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	5,076,557	444,798				**5,521,355**
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	82,314,732	55,470,466	10,029,512	31,269		**147,845,979**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆին. ակտիվներ	3,092,541	518,193	54,702			**3,665,436**
Հետգնման պայմանագրով գրավադրված արժեթղթեր	19,393,485					**19,393,485**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ		471,969				**471,969**
Այլ ակտիվներ	62,063	6,951	3,547	5	678	**73,244**
Ընդամենը ակտիվներ	**129,617,095**	**69,507,545**	**23,766,916**	**1,461,618**	**182,253**	**224,535,427**
Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	17,288,008	11,456,328	3,114,878	42,063	523	**31,901,800**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	8,251,288	23,568,910				**31,820,198**
ՀՀ Կենտրոնական Բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	6,290,725					**6,290,725**
Հետգնման պայմանագրեր	22,083,250	191,126				**22,274,376**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	47,327,336	44,578,679	6,862,413	1,640,257	47,157	**100,455,842**
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	144,496					**144,496**
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	587,886	3,722,877				**4,310,763**
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն	13,017					**13,017**
Վճարվելիք գումարներ	685,453					**685,453**
Հետաձգված հարկային պարտավորություն	808,985					**808,985**
Պահուստներ	59,554					**59,554**
Այլ պարտավորություններ	1,115,011	25,685	2,296	96,560	49	**1,239,601**
Ընդամենը պարտավորություններ	**104,655,009**	**83,543,605**	**9,979,587**	**1,778,880**	**47,729**	**200,004,810**
Հաշվեկշռային բաց դիրք	**24,962,086**	**(14,036,060)**	**13,787,329**	**(317,262)**	**134,524**	**24,530,617**
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն						
Համախառն մարվող արժութային ածանցյալներ		**13,654,957**	**(13,851,345)**	**286,419**	**(103,048)**	**(13,017)**
Զուտ դիրք	**24,962,086**	**(381,103)**	**(64,016)**	**(30,843)**	**31,476**	**24,517,600**

31/12/2018

	ՀՀ դրամ	USD	EUR	RUB	Այլ արժույթ	Ընդամենը
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19,409,916	7,288,803	10,096,619	1,295,801	66,906	**38,158,045**
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ	2,142,576	9,176,666	1,404,248	452,424	36	**13,175,950**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,681,119	201,584				**3,882,703**
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	71,471,900	56,944,494	5,196,546	16,835		**133,629,775**
Հետգնման պայմանագրով գրավադրված արժեթղթեր	19,131,502	620,724				**19,752,226**
Այլ ակտիվներ	122,879	3,108	3,373	20		**129,380**
Այլ ակտիվներ	**115,959,892**	**74,235,379**	**16,700,786**	**1,765,080**	**66,942**	**208,728,079**
Պարտավորություններ						**-**
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	13,809,185	16,449,077	3,677,240	149,094	1,195	**34,085,791**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	3,333,997	20,725,693				**24,059,690**
ՀՀ Կենտրոնական Բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	6,055,317					**6,055,317**
Հետգնման պայմանագրեր	20,204,342	314,706				**20,519,048**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	46,307,832	42,176,826	5,826,961	1,488,309	28,840	**95,828,768**
Ստորադաս փոխառություն	705,853	2,676,296				**3,382,149**
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	273,836					**273,836**
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	102,880	1,958,080				**2,060,960**
Վճարվելիք գումարներ	280,380					**280,380**
Հետաձգված հարկային պարտավորություն	849,982					**849,982**
Պահուստներ	61,891					**61,891**
Այլ պարտավորություններ	322,484	181,064	26,605	55,327		**585,480**
Այլ պարտավորություններ	**92,307,979**	**84,481,742**	**9,530,806**	**1,692,730**	**30,035**	**188,043,292**
Հաշվեկշռային բաց դիրք	**23,651,913**	**(10,246,363)**	**7,169,980**	**72,350**	**36,907**	**20,684,787**
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն						
Համախառն մարվող արժութային ածանցյալներ	**(2,040,328)**	**9,400,298**	**(7,364,942)**	**145,120**	**(122,680)**	**17,468**
Բաց դիրք	**21,611,585**	**(846,065)**	**(194,962)**	**217,470**	**(85,773)**	**20,702,255**

* "I խմբի արտարժույթի" կազմը հետևյալն է. ԱՄՆ դոլար, Անգլիական ֆունտ ստեռլինգ, Եվրո, Շվեյցարական ֆրանկ, Ռսկու ստանդարտացված ձուլակտոր և Մետաղական հաշիվ
** "II խմբի արտարժույթի" կազմը հետևյալն է. ՌԴ ռուբլի, KZT,Վրացական լարի, ՄԱԷ դիրհամ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկի գնահատում՝

Դիսբալանսի վերլուծությունը ցույց է տալիս, որ բանկի 2019թ. II եռամսյակի միջին կուտակային դիսբալանսը (տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կուտակային ճեղքվածքը) դրական է՝ 17,855,840 հազ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 19,441,662 հազ. դրամի դիմաց՝ բացարձակ արժեքով նվազելով 1,585,822 հազ. դրամով կամ 8.2%-ով, այսինքն՝ բանկը միջին հաշվով 2019թ. II եռամսյակում զգայուն է եղել ըստ ակտիվների: Միջին կուտակային դիսբալանսը 2019թ. II եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, բացարձակ արժեքով աճել է 3,083,867 հազ. դրամով կամ 20.9%-ով:

Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության միջին գործակիցը 2019թ. II եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 3.5 տոկոսային կետով՝ կազմելով 110.9%՝ 2018թ. II եռամսյակի 114.4% միջին արժեքի դիմաց, այսինքն 2019թ. II եռամսյակում միջին հաշվով տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվները կազմել են տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորությունների 110.9%-ը:

Ակտիվների դյուրացիան 2019թ. II եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 1.579 տարի (2018թ.-ի II եռամսյակի վերջի 1.448 տարվա դիմաց)՝ աճելով 0.131 տարով կամ 9.0%-ով: Նախորդ եռամսյակի վերջի համեմատ (1.525 տարի) նշված ցուցանիշն աճել է 0.054 տարով կամ 3.5%-ով:

Պարտավորությունների դյուրացիան 2019թ. II եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 0.902 տարի (2018թ.-ի II եռամսյակի վերջի 0.869 տարվա դիմաց)՝ աճելով 0.033 տարով կամ 3.8%-ով: Նախորդ եռամսյակի վերջի համեմատ (0.847) նշված ցուցանիշն աճել է 0.055 տարով կամ 6.5%-ով::

Դյուրացիայի ճեղքվածքը 2019թ. II եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 0.783 (2018թ.-ի II եռամսյակի վերջի 0.693-ի դիմաց)՝ աճելով 0.090-ով կամ 13.0%-ով: Նախորդ եռամսյակի վերջի համեմատ (0.774) նշված ցուցանիշն աճել է 0.009-ով կամ 1.2%-ով:

Փոփոխվող տոկոսադրույքով ակտիվներ և պարտավորություններ

30.06.2019թ

Հազ. դրամ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
Տեղաբաշխված միջոցներ	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ												
Ընդամենը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ներգրավված միջոցներ												
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ,												
- վարկեր				7,485,051		5,794,667		2,386,650		2,440,350		
Ընդամենը	-	-	-	**7,485,051**	-	**5,794,667**	-	**2,386,650**	-	**2,440,350**	-	-
Զուտ դիրք	-	-	-	**(7,485,051)**	-	**(5,794,667)**	-	**(2,386,650)**	-	**(2,440,350)**	-	-

31/12/2018

Հազ. դրամ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
Տեղաբաշխված միջոցներ	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող												
Ընդամենը												
Ներգրավված միջոցներ												
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝												
- վարկեր				10,101,728		4,231,924		101,104				
Ընդամենը	-	-	-	**10,101,728**	-	**4,231,924**	-	**101,104**	-	-	-	-
Զուտ դիրք	-	-	-	**(10,101,728)**	-	**(4,231,924)**	-	**(101,104)**	-	-	-	-

Ներկայացվում է հաշվետու և նախորդ ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքները.

Հոդվածի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ 30/06/2019թ.		Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ 31/12/2018թ.	
	Դրամ	Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ
Ակտիվներ				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում			4.60	-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	7.0	1.4	7.70	2.60
- միջբանկային վարկեր	6.1	1.8	0.00	2.60
- միջբանկային ռեպո	6.4		6.70	0.00
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	10.7	6.8	12.05	6.24
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվողն վաճառքի համար մատչելի արժեթղթեր	13.0	8.7	11.50	5.60
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	7.6	5.2	7.90	4.80
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	5.6	3.6	5.09	3.80

3) մոդելների նկարագրությունը

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքի տատանման հետևանքով վերագնահատումից հնարավոր առավելագույն վնասն է, որը գնահատվում է ինչպես ըստ առանձին արտարժույթների, այնպես էլ բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների ողջ փաթեթի (այսուհետ՝ փաթեթ) համար:

Արտարժութային ռիսկի չափման և գնահատման համար կիրառվում է միջազգային պրակտիկայում ընդունված VAR (Value at Risk) մեթոդը (մոդելը), որի միջոցով հաշվարկվում է ինչպես առանձին արտարժույթի տեսակների (արտարժութային դիրքերի), այնպես էլ ամբողջ փաթեթի համար հնարավոր առավելագույն վնասի չափը (տրված հուսալիությամբ): Համաձայն VAR մեթոդի հնարավոր առավելագույն վնասի չափը հաշվարկվում է արտարժութային բաց դիրքերի և փոխարժեքների տատանումը բնութագրող ժամանակային շարքերի հիման վրա: Բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների համար հաշվարկված մեկօրյա VAR-երի հիման վրա գնահատվում են 10-օրյա VAR-երի արժեքները՝ առանձին արտարժույթների և ընդհանուր փաթեթի համար:

Հնարավոր առավելագույն վնասի հաշվարկը հնարավորություն է տալիս բանկին գնահատել իր արտարժութային գործունեության արդյունավետությունը՝ հաշվի առնելով կորուստ կրելու ռիսկին ենթարկվածության աստիճանը, կառավարել արտարժութային դիրքերը՝ ելնելով հնարավոր առավելագույն կորուստների չափից, անհրաժեշտության դեպքում սահմանափակելով արտարժութային դիրքերի ծավալները:

Բանկի արտարժութային քաղաքականությունը միտված է արտարժութային դիրքերի արդյունավետ կառավարման ապահովմանը՝ զուգակցելով այն արդարացված ռիսկի մակարդակի հետ, իսկ նորմատիվների հաշվարկման ժամանակ հաշվարկվում է արտարժույթային ռիսկի հաշվարկման ստանդարտ մեթոդաբանության համաձայն :

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հնարավորությունն է բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատումն իրականացվում է "Տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մոդելի" ("GAP մոդել") և "Դյուրացիայի մոդելի" կիրառմամբ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի տնտեսական արժեքի վրա:

GAP ցուցանիշը (ճեղքվածքը) հաշվարկվում է որպես տոկոսադրույքի փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների տարբերություն: Հաշվարկներն իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ առաջիկա 3 ամիսների ընթացքում զուտ տոկոսային եկամտի վրա տոկոսադրույքի փոփոխության ազդեցության գնահատման համար:

Սույն մոդելի շրջանակներում կատարվում են հետևյալ ենթադրությունները.

1. դիտարկվող ժամանակահատվածում ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և ծավալները մնում են անփոփոխ, այսինքն՝ մարված ակտիվները և պարտավորությունները կրկին տեղաբաշխվում և ներգրավվում են, բայց արդեն նոր գործող տոկոսադրույքներով,
2. տոկոսադրույքների վերանայումը կատարվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանի միջնակետում,
3. տարբեր մարման ժամկետայնությամբ բոլոր ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքները փոփոխվում են միևնույն չափով, այսինքն՝ տեղի է ունենում ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության կորերի զուգահեռ տեղաշարժ:

Բանկի զգայունությունը տոկոսադրույքի նկատմամբ գնահատվում է "ճեղքվածքի հարաբերակցություն" ցուցանիշի միջոցով (GAP/ASSETS), որը հաշվարկվում է ակտիվների և պարտավորությունների կումուլյատիվ ճեղքվածքը հարաբերելով ակտիվներին:

Դյուրացիայի մոդելի դեպքում գնահատվում է տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը կապիտալի տնտեսական արժեքի վրա հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Այս մոդելի շրջանակներում նախ հաշվարկվում են բանկի ակտիվների և պարտավորությունների պորտֆելների դյուրացիաները (միջին կշռված ժամկետայնությունները), այնուհետև, վերջիններիս հիման վրա՝ կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը, որն իրենից ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների (ապագա հոսքերի) ներկա արժեքների փոփոխությունների (պայմանավորված տոկոսադրույքի տատանմամբ) տարբերությունը: Կապիտալի տնտեսական արժեքի փոփոխության գնահատման համար հաշվարկվում է դյուրացիայի ճեղքվածքը

, որն արտացոլում է բանկի ակտիվների և պարտավորությունների դյուրացիաների անհամապատասխանության աստիճանը, այսինքն՝ ակտիվների և պարտավորությունների ապագա հոսքերի միջին կշռված ժամկետայնությունների անհամապատասխանությունը: Դյուրացիայի ճեղքվածքի մեծ արժեքը վկայում է տոկոսադրույքների ռիսկի մակարդակի բարձր լինելու մասին: Դյուրացիայի ճեղքվածքի ցածր մակարդակի պահպանումը, այսինքն՝ ակտիվների և պարտավորությունների դյուրացիաների միմյանց մոտ արժեքների ապահովումը, հանգեցնում է տոկոսադրույքի ռիսկի հեջավորման (կապիտալի տնտեսական արժեքի՝ տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ կայունության):

Մշտապես ուսումնասիրվում են փոփոխուն տոկոսադրույքների տատանումները և դինամիկան, գնահատվում է դրանց հավանական փոփոխությունների ազդեցությունը բանկի փոփոխուն տոկոսադրույքով ակտիվների և պարտավորությունների վրա:

Տոկոսադրույքի ռիսկի նվազեցման նպատակով ապահովվում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կուտակային ճեղքվածքի (կուտակային դիսբալանսի) և դյուրացիայի ճեղքվածքի պահպանումը ռիսկի ընդունելի սահմաններում: Հաշվի առնելով տոկոսադրույքների փոփոխման ընդհանուր միտվածությունը և կիրառելով մշակված մոդելները՝ միջոցառումներ են ձեռնարկվում ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալային և ժամկետային արդյունավետ հարաբերակցությունների ապահովման ուղղությամբ:

Գնային ռիսկ

Գնային ռիսկը որևէ բորսայում (ներում) ցուցակված, բանկի հաշվեկշռում շուկայական ընթացիկ գներով արտացոլվող կապիտալի գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով Բանկի կողմից ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ կապիտալի գործիքի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- V ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության
- V հնարավոր կորուստների գնահատում,
- V հեջավորման գործիքների կիրառում,
- V ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- V կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Իրացվելիության ռիսկ

1) իրացվելիության ռիսկի բանկի սեփական սահմանումը

Իրացվելիությունը բանկի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարման հնարավորությունն է:

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա:

2) իրացվելիության ռիսկի չափման և գնահատման մոդելների նկարագրությունը

Իրացվելիության ռիսկի գնահատման համար կիրառվում են՝ սթրես թեստերի մեթոդը, որը ենթադրում է դիտարկվող տարբեր շոկային սցենարների տեղի ունենալու դեպքում բանկի իրացվելիության նորմատիվների խախտման հնարավորության բացահայտում և դրանց չափերի հաշվարկ և ժամկետայնության ճեղքվածքների մեթոդը, որը ենթադրում է իրացվելիության ցուցանիշների հաշվարկ, որոնց միջոցով իրականացվում է նաև իրացվելիության կառավարման որակի գնահատում:

Սթրես թեստերը կիրառելիս դիտարկվում են տվյալ ռիսկին վերաբերող մի շարք սցենարներ: Յուրաքանչյուր սցենարի դեպքում համապատասխան մեթոդով հաշվարկվում են բանկի նորմատիվների խախտման չափերը:

Իրացվելիության ռիսկի գնահատման նպատակով օգտագործվում են հետևյալ շոկային սցենարները.

1. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջում,
2. իրավաբանական անձանց ժամկետային ավանդների 25%-ի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջում,
3. բոլոր ցպահանջ պարտավորությունների 25%-ի ետ պահանջում,
4. ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի պայմանագրի ժամկետից շուտ և բոլոր ցպահանջ

5. ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների X%-ի ժամկետից շուտ և բոլոր ցպահանջ պարտավորությունների Y%-ի ետ պահանջում (ընդ որում դիտարկվում են սցենարի երեք մակարդակ՝ մեղմ, միջին և խիստ, որոնք իրենցից ներկայացնում են ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների (ժամկետից շուտ) և բոլոր ցպահանջ պարտավորությունների համապատասխանաբար 10, 15 և 20 տոկոսի միաժամանակ ետ պահանջման իրավիճակները):
Բացահայտվում է նշված իրավիճակների հանդես գալու պայմաններում իրացվելիության Ն21 և Ն22 նորմատիվների

Իրացվելիության ռիսկի գնահատման ժամկետայնության ճեղքվածքների մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և վերլուծել բանկի իրացվելիության ռիսկը, ինչպես նաև բանկի կողմից վարվող քաղաքականությունը իրացվելիության բավարար մակարդակը պահպանելու համար: Այդ նպատակով բացահայտվում են բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքները, հաշվարկվում են իրացվելիության ցուցանիշները և գնահատվում է բանկի իրացվելիության կառավարման որակը: Իրացվելիության գնահատման սույն մեթոդաբանությունում կատարվում է ակնթարթային, մինչև 90 օր կուտակային և ընդհանուր (մինչև մեկ տարի կուտակային) իրացվելիությունների տարանջատում, ինչպես նաև դիտարկվում են իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերը բանկի իրացվելիության կառավարման որակի գնահատման համար:

3) իրացվելիության ռիսկի թույլատրելի մակարդակի որոշումը՝ ռիսկի քանակական վերլուծություն և ռիսկի քանակական գնահատական

Իրացվելիության ռիսկի գնահատում:

2019թ II եռամսյակի ընթացքում ակնթարթային և ընդհանուր (մինչև 1 տարի կուտակային) իրացվելիության ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 13.5 և 5.0 տոկոսային կետով, իսկ մինչև 90 օր կուտակային իրացվելիության ցուցանիշն աճել է 4.7 տոկոսային կետով:

Հաշվետու ժամանակաշրջան 30/06/2019

Հազ. դրամ

Հոդվածի անվանումը	Չաշխատող	Մարմանը մնացել է							Անժամկետ	Ընդամենը
	Ժամկետային	Ժամկետանց	Ցպահանջ	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 12 ամիս	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	35,044,580	144	-	-	-	-	-	35,044,724
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ	-	-	98,566	-	-	-	-	-	-	98,566
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	66,468	3,032,818	5,960,221	-	2,439,789	-	921,373	12,420,669
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	-	-	5,521,354	-	-	-	-	-	5,521,354
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ		-	-	-	-	-	471,969	-	-	471,969
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	346	387,247		16,008,717	10,945,057	19,522,534	72,962,345	28,019,733	-	147,845,979
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	2,921	186,660	1,028	1,769,555	1,615,445	89,826	3,665,435
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	19,393,487	-	-	-	-	-	19,393,487
Այլ պահանջներ	1,188	-		71,645	-	-	-	411	-	73,244
Ընդամենը	**1,534**	**387,247**	**35,209,614**	**44,031,086**	**17,091,938**	**19,523,562**	**77,643,658**	**29,635,589**	**1,011,199**	**224,535,427**
Այդ թվում՝										
I խմբի արտարժույթով		274,625	17,052,232	7,846,429	8,368,939	8,323,809	35,828,590	15,591,013	129,637	93,415,274
II խմբի արտարժույթով			1,159,313	314,191	1,629	3,343	24,582			1,503,058
Այդ թվում՝										
Փոփոխվող տոկոսադրույքներով			154,825							154,825
Ֆիքսված տոկոսադրույքներով	1,188	269,193	35,054,786	41,230,131	16,208,515	17,875,839	75,114,108	29,596,651	-	215,350,411
Անտոկոս	346	118,054	3	2,800,955	883,423	1,647,723	2,529,550	38,938	1,011,199	9,030,191
Պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ	-	-								-
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ն	-	-	1,493,549	1,977,867	12,030,723	2,279,491	10,479,738	3,640,428	-	31,901,796
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավ	-	-	-	587,952	5,790,358	615,984	23,872,229	953,676	-	31,820,199
ՀՀ Կենտրոնական Բանկից և ՀՀ կառավորությունից ստացված վարկեր	-	-	30,992	7,032	89,569	80,394	6,065,234	17,503	-	6,290,724
Հետգնման պայմանագրեր	-	-	-	22,274,377	-	-	-	-	-	22,274,377
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	-	36,099,255	15,048,230	12,279,052	21,407,842	13,438,809	2,182,654	-	100,455,842
Ստորադաս փոխառություն										-
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր				32,557	17,080	1,053,621	3,207,505			4,310,763
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն						144,496				144,496
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն				13,017						13,017
Վճարվելիք գումարներ				620,452	65,000					685,452
Հետաձգված հարկային պարտավորություններ						808,985				808,985
Պահուստներ	-	-		59,554						59,554
Այլ պարտավորություններ	-	-	1,032,900	202,221	253	4,203	24	-	-	1,239,601
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ				1,306,212	1,764,158	2,144,421	8,924,950			14,139,741
Ընդամենը	-	-	**38,656,696**	**42,162,028**	**32,053,273**	**29,593,058**	**69,195,994**	**6,794,261**	**-**	**218,455,310**
Այդ թվում՝										-
I խմբի արտարժույթով			14,847,857	9,782,523	21,762,554	14,625,919	29,474,772	3,075,291		93,568,916
II խմբի արտարժույթով			515,134	518,373	392,347	186,925	168,106			1,780,885
Այդ թվում՝										-
"Խոշոր" պարտավորություններ				15,047,193	90,429	80,394	6,083,702			21,301,718
Փոփոխվող տոկոսադրույքներով				328,334	2,265,864	318,483	14,240,067	953,676		18,106,424
Ֆիքսված տոկոսադրույքներով			10,361,453	38,493,662	27,130,593	24,760,685	42,655,604	5,840,104		149,242,101
Անտոկոս			28,295,243	3,340,032	2,656,816	4,513,890	12,300,323	481	-	51,106,785
Զուտ իրացվելիության ճեղքվածք	**1,534**	**387,247**	**(3,447,082)**	**1,869,058**	**(14,961,335)**	**(10,069,496)**	**8,447,664**	**22,841,328**	**1,011,199**	**6,080,117**
Այդ թվում՝										**-**
I խմբի արտարժույթով	**-**	**274,625**	**2,204,375**	**(1,936,094)**	**(13,393,615)**	**(6,302,110)**	**6,353,818**	**12,515,722**	**129,637**	**(153,642)**
II խմբի արտարժույթով	**-**	**-**	**644,179**	**(204,182)**	**(390,718)**	**(183,582)**	**(143,524)**	**-**	**-**	**(277,827)**
Փոփոխվող տոկոսադրույքների համար	**-**	**-**	**154,825**	**(328,334)**	**(2,265,864)**	**(318,483)**	**(14,240,067)**	**(953,676)**	**-**	**(17,951,599)**
Ֆիքսված տոկոսադրույքների համար	**1,188**	**269,193**	**24,693,333**	**2,736,469**	**(10,922,078)**	**(6,884,846)**	**32,458,504**	**23,756,547**	**-**	**66,108,310**

Կուտակային իրացվելության ճեղքվածք	**1,534**	**388,781**	**(3,058,301)**	**(1,189,243)**	**(16,150,578)**	**(26,220,074)**	**(17,772,410)**	**5,068,918**	**6,080,117**	

Նախորդ հաշվետու ժամանակաշրջան **31/12/2018**

Հազ. դրամ

Հոդվածի անվանումը	**Չաշխատող**		**Մարմանը մնացել է**						**Անժամկետ**	**Ընդամենը**
	Ժամկետային	Ժամկետանց	Ցպահանջ	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 12 ամիս	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			36,186,028	1,972,017						38,158,045
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ	-	-	116,058	-	-	-	-	-		116,058
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				6,834,632	1,466,421	183,134	2,721,169	161,083	1,809,511	13,175,950
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	-		3,882,703						3,882,703
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ				17,468						17,468
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	222,871	237,497		15,017,474	16,373,027	16,216,225	61,368,037	24,194,644		133,629,775
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				100,252	211,678	182,010	1,173,276	541,034	89,768	2,298,018
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր				17,454,208						17,454,208
Այլ պահանջներ	13	-		73,657	3,295		217	483		77,665
Ընդամենը										-
Այդ թվում՝	222,884	237,497	36,302,086	45,352,411	18,054,421	16,581,369	65,262,699	24,897,244	1,899,279	208,809,890
I խմբի արտարժույթով										
II խմբի արտարժույթով	261,867	161,993	17,457,903	11,910,661	9,700,299	6,416,475	31,518,834	13,988,182	208,462	91,624,676
Այդ թվում՝	-	-	1,308,814	293,540	626	1,337	14,141	-	3,021	1,621,479
Փոփոխվող տոկոսադրույքներով										
Ֆիքսված տոկոսադրույքներով			540,056							540,056
Անտոկոս	222,871	237,497	220,981	43,959,434	18,031,637	16,539,184	64,995,842	24,761,029	1,806,490	170,774,965
Պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ	13	-	35,541,049	1,392,977	22,784	42,185	266,857	136,215	92,789	37,494,869
	-	-								-
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ն	-	-	1,197,678	5,851,180	4,309,846	12,386,214	8,232,128	2,108,747		34,085,793
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավ	-	-		349,797	3,177,574	6,068,147	13,013,362	1,450,809		24,059,689
ՀՀ Կենտրոնական Բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	-	-	25,315	5,275	70,255	58,484	5,895,988			6,055,317
Հետգնման պայմանագրեր	-	-		20,519,048						20,519,048
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	-	39,161,057	12,396,868	9,848,257	20,463,896	11,830,458	2,128,232		95,828,768
Ստորադաս փոխառություն				21,725				3,360,424		3,382,149
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն			273,836							273,836
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր			26,421				2,034,539			2,060,960
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն										-
Վճարվելիք գումարներ			280,380							280,380
Հետաձգված հարկային պարտավորություններ			849,982							849,982
Պահուստներ	-	-	61,891							61,891
Այլ պարտավորություններ	-	-	961,140	258,870	518	5,740	-	-	-	1,226,268
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ				5,508,107	700,529	6,721,642	8,569,195			21,499,473
Ընդամենը	-	-	42,837,700	44,910,870	18,106,979	45,704,123	49,575,670	9,048,212	-	210,183,554
I խմբի արտարժույթով										-
II խմբի արտարժույթով	-	-	15,004,087	12446325	10,060,828	26,980,803	23,221,052	6,195,894	-	93,908,989
"Խոշոր" պարտավորություններ	-	-	503,572	424,683	248,615	436,718	81,313	-	-	1,694,901
Այդ թվում՝			13812688		72,275	5,955,780				19,840,743
Փոփոխվող տոկոսադրույքներով										-
Ֆիքսված տոկոսադրույքներով			10101728	4,231,924	101,104					14,434,756
Անտոկոս	-	-	10,764,668	37,412,330	20,193,520	45,916,216	29,443,922	7,597,403	-	162,595,601
Զուտ իրացվելիության ճեղքվածք	-	-	32,818,160	327,416	1,881	5,740	-	-		33,153,197
Այդ թվում՝	**222,884**	**237,497**	**(6,535,614)**	**441,541**	**(52,558)**	**(29,122,754)**	**15,687,029**	**15,849,032**	**1,899,279**	**(1,373,664)**
I խմբի արտարժույթով										**-**
II խմբի արտարժույթով	**261,867**	**161,993**	**2,453,816**	**(535,664)**	**(360,529)**	**(20,564,328)**	**8,297,782**	**7,792,288**	**208,462**	**(2,284,313)**
Փոփոխվող տոկոսադրույքների համար	**-**	**-**	**805,242**	**(131,143)**	**(247,989)**	**(435,381)**	**(67,172)**	**-**	**3,021**	**(73,422)**
Ֆիքսված տոկոսադրույքների համար	**-**	**-**	**(9,561,672)**	**(4,231,924)**	**(101,104)**	**-**	**-**	**-**	**-**	**(13,894,700)**
Կուտակային իրացվելության ճեղքվածք	**222,871**	**237,497**	**(10,543,687)**	**6,547,104**	**(2,161,883)**	**(29,377,032)**	**35,551,920**	**17,163,626**	**1,806,490**	**19,446,906**
	222,884	**460,381**	**(6,075,233)**	**(5,633,692)**	**(5,686,250)**	**(34,809,004)**	**(19,121,975)**	**(3,272,943)**	**(1,373,664)**	

Ծանոթագրություն 33. "Կապիտալ և կապիտալի համարժեքություն"

Բանկում առկա չեն կապիտալի մակարդակի նկատմամբ սահմանված ներքին պահանջներ: ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից բանկերի համար սահմանված է ռիսկով կշռված ակտիվների նկատմամբ 12 % ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշ: ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահնված է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 30,000,000 հազ. դրամ գումարով: Բանկը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է կապիտալի մակարդակի համար սահմանված նորմատիվային պահանջները:

Ներկայացնում ենք հաշվեկշռային կապիտալի կառուցվածքը.

Հազ դրամ

	30.06.2019	31.12.2018
Կանոնադրական կապիտալ	25,635,343	22,266,343
Էմիսիոն եկամուտ/վնաս		
Պահուստներ՝	7,553,212	7,374,540
Գլխավոր պահուստ	3,105,000	3,000,000
Վերագնահատման պահուստներ	4,448,212	4,374,540
Չբաշխված շահույթ (վնաս)	4,449,461	3,550,947
Ընդամենը կապիտալ	**37,638,016**	**33,191,830**

Ներկայացնում ենք ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման համար կիրառվող հիմնական և ընդհանուր կապիտալները կապիտալի համարժեքության ցուցանիշները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ ըստ ամիսների, համեմատելով այդ ցուցանիշները նորմատիվային պահանջների հետ.

	Նորմատիվների հաշվարկին մասնակցող						
2019թ.	**Հիմնական կապիտալ**	**Լրացուցիչ կապիտալ**	**Ընդհանուր Կապիտալ**	**Վարկային ռիսկ**	**Շուկայական և գործառն.ռիսկ**	**համարժեք.Փաստացի %**	**ՀՀ ԿԲ-ի սահմանաչափ %**
	1	**2**	**3 (1+2)**	**4**	**5**	**6**	**7**
Հունվար	26,906,529	6,490,827	33,397,356	200,970,617	2,619,987	14.99	12
Փետրվար	27,000,876	6,639,226	33,640,102	205,658,127	2,607,664	14.79	12
Մարտ	27,492,103	6,412,428	33,904,531	198,991,611	2,842,016	15.23	12
Ապրիլ	29,302,537	5,485,391	34,787,928	204,535,057	3,161,462	15.07	12
Մայիս	29,498,890	5,544,102	35,042,992	209,511,352	3,006,944	14.94	12
Հունիս	29,440,126	5,232,053	34,672,179	214,690,443	3,068,754	14.43	12

	Նորմատիվների հաշվարկին մասնակցող						
2018թ.	Հիմնական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Ընդհանուր Կապիտալ	Վարկային ռիսկ	Շուկայական և գործառն.ռիսկ	համարժեք.Փաստացի %	ՀՀ ԿԲ-ի սահմանաչափ %
	1	2	3 (1+2)	4	5	6	7
Հունվար	22,237,931	8,895,172	31,133,103	162,604,603	2,964,793	16.62	12
Փետրվար	22,372,558	8,949,023	31,321,581	164,993,021	2,881,752	16.57	12
Մարտ	22,394,302	8,957,721	31,352,023	167,283,611	2,932,572	16.35	12
Ապրիլ	22,477,933	8,991,173	31,469,106	171,626,878	3,114,747	15.93	12
Մայիս	22,564,866	9,025,947	31,590,813	1,775,993,409	2,895,764	1.75	12
Հունիս	24,486,179	8,024,985	32,511,164	178,105,489	2,931,788	16.05	12
Հուլիս	25,608,927	7,454,226	33,063,153	176,320,294	2,947,230	16.46	12
Օգոստոս	25,832,738	7,611,498	33,444,236	177,374,129	2,849,681	16.63	12
Սեպտեմբեր	25,916,416	7,386,936	33,303,352	182,523,604	2,664,827	16.27	12
Հոկտեմբեր	25,965,103	7,455,384	33,420,487	187,015,180	2,647,373	15.98	12
Նոյեմբեր	26,177,739	7,361,071	33,538,810	190,171,448	2,537,621	15.87	12
Դեկտեմբեր	26,735,335	6,758,956	33,494,291	196,080,641	2,554,422	15.41	12

Ներկայացնում ենք ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանի վերջի և նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների, անավարտ ժամկետային գործառնությունների ռիսկերի կշիռները՝ ըստ ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատված Կանոնակարգ 2-ի ռիսկի կշիռների.

Հազ. դրամ

30.06.2019թ. դրությամբ				
Ռիսկի կշիռը	Ակտիվներ	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	Անավարտ ժամկետային գործառնություններ	Ընդամենը վարկային ռիսկ
0%	64,157,261	217,366		-
10%	5,262,248			526,225
20%	1,349,616			269,923
30%	236,850			71,055
35%	4,078,767			1,427,568
50%	914,688			457,344
75%	1,437,500			1,078,125
100%	89,664,950	4,858,516		94,523,466
110%				-
150%	73,696,774	4,719,727	213,415	117,944,874
Ընդամենը	240,798,654	9,795,609	213,415	216,298,580

31.12.2018թ. դրությամբ				
Ռիսկի կշիռը	Ակտիվներ	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	Անավարտ ժամկետային գործառնություններ	Ընդամենը վարկային ռիսկ
0%	65,560,897	234,483		-
10%	3,812,100			381,210
20%	967,429			193,486
30%	310,033		30,728	102,228
35%	3,114,295			1,090,003
50%	1,949,936			974,968
75%	1,477,748			1,108,311
100%	89,319,445	4,762,189		94,081,634
110%				-
150%	60,349,814	5,799,547	145,407	99,442,152
Ընդամենը	226,861,697	10,796,219	145,407	197,373,992

Ծանոթագրություն 34. "Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք"

Ներկայացնում ենք ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքի վերաբերյալ բացահայտումներ՝ կատարված ՖՀՄՍ 32 "Ֆինանսական գործիքներ, բացահայտումը և ներկայացումը" պահանջների համաձայն.

Ֆինանսական գործիքների իրական արժեքը այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը մարվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև "պարզած ձեռքի հեռավորության" գործարքի ընթացքում:

ՀՀ պետական գանձապետական և ՀՀ ԿԲ արժեթղթերի իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշումների հիման վրա:

30.06.19թ. դրությամբ ֆինանսական գործիքի յուրաքանչյուր դասի իրական արժեքի գնահատման ժամանակ Բանկի կողմից օգտագործվել են հետևյալ մեթոդներն ու գնահատումները.

Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ Կենտրոնական Բանկում.

Այս կարճաժամկետ գործիքների համար հաշվեկշռային արժեքը ճշգրտորեն արտացոլում է նրանց իրական արժեքը:

Հաճախորդներին տրված վարկեր ու փոխատվություններ, պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ.

Վարկային պորտֆելի իրական արժեքը կախված է պորտֆելի յուրաքանչյուր դասի շրջանակներում առանձին վարկի վարկային և տոկոսադրույքային առանձնահատկություններից: Վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդի գնահատումը հաշվի է առնում վարկերի տարբեր դասերին բնորոշ ռիսկերը, ինչը հիմնված է այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են տնտեսական այն ճյուղի իրավիճակը, որտեղ գործում է յուրաքանչյուր փոխառուն, յուրաքանչյուր փոխառուի տնտեսական իրավիճակը և ձեռք բերված երաշխիքները: Հետևաբար վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդը այն զեղչի ճշգրիտ գնահատականն է, որն արտացոլում է վարկային ռիսկի ազդեցությունը:

Ներգրավված միջոցներ բանկերից ու այլ ֆինանսական կազմակերպություններից.
Հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:

Հաճախորդների ավանդներ և բանկային հաշիվներ.
Հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:

30.06.19թ. դրությամբ բանկը չունի այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք հաշվառվում են իրական արժեքը գերազանցող գումարով:

Ծանոթագրություն 35. "Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում"

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանում այս ծանոթագրության համար ներկայացվելիք տվյալներ առկա չեն:

Ծանոթագրություն 36. "Ապաճանաչում"

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանում այս ծանոթագրության համար ներկայացվելիք տվյալներ առկա չեն:

Ծանոթագրություն 37. "Գրավադրված ակտիվներ"

30.06.19թ. դրությամբ բանկը գրավադրված ակտիվներ չունի :

Ծանոթագրություն 38. "Ընդունված գրավ"

30.06.2019թ. դրությամբ առկա չեն գրավ ընդունված ակտիվներ, որոնք բանկն իրավունք ունի վաճառել կամ նորից գրավադրել հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման, խախտման բացակայության դեպքում:

Ներկայացնում ենք բանկի կողմից գրավ ընդունված ակտիվները և երաշխավորությունները իրենց համապատասխան վարկային ներդրումների հետ, առանց հաշվի առնելու պահուստի գումարները.

Գրավի տեսակ	30/06/2019		31/12/2018	
	Վարկի գումար	Գրավի գումար	Վարկի գումար	Գրավի գումար
Անշարժ գույք	59,525,041	233,226,132	52,110,663	210,104,952
Ավտոմեքենա	1,314,393	5,847,750	1,660,810	6,192,910
Սարքավորում	1,747,709	7,086,596	1,663,811	5,967,455
Պատրաստի արտադրանք	2,342,486	8,257,500	1,181,078	5,188,986
Երաշխավորություն	45,570,043	237,680,632	40,268,615	197,344,316
Դրամական միջոցներ	1,169,665	1,826,855	556,889	964,047
Ոսկյա իրեր	11,119,449	13,486,011	9,417,962	11,398,065
Այլ արժեթղթեր	306,956	708,967	287,512	773,543
Այլ գրավ	14,128,008	24,285,053	15,787,642	22,179,624
Գրավ առկա չէ	12,130,452		12,203,221	
Ընդամենը	**149,354,202**	**532,405,496**	**135,138,203**	**460,113,898**

Ծանոթագրություն 39 "Պարտավորությունների չկատարում/խախտում"

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանում այս ծանոթագրության համար ներկայացվելիք տվյալներ առկա չեն:

Բանկի վարչության նախագահ Ա. Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ Մ.Պողոսյան